Azg Ազգ

26 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2012 ՈՒՐԲԱԹ 189(5041)

ISSN: 1829-1651

Ճկույթ կտրե՞նք, որ աշխատեք

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ի՞նչ պետք է անի ՀՀ սովորական քաղաքացին, անգամ եթե նա դասաղարտյալ քաղաքացի է, որ նրա ձայնը տեղ հասնի: Արդյոք եվրոպական պարտավորությունները, որ սանձնում են մերոնք, եվրոպաշտոնյաների առջեւ ծեփծեփումները, թե ամեն ինչ արվում է դասաիրավական համակարգը բարեփոխելու, միայն ինֆորմացիոն խա՞ծ են՝ կայֆեկայք, եթերից եթեր փոխանցվող, եւ դրանց բովանդակությունը հնարավոր չէ մոտեցնել կյանքին գոնե մի քանի միլիմետրով: Արդյոք մարդն իրեն լսելու համար պե՞տք է ճկույթը կտրի, բերանը կարի կամ ինքնահրկիզվի, կամ էլ նախագահի նստավայրի մոտ օրերով նստի, որ նրան լսեն կամ նրա գործին ընթացք տան:

Համենայն դեպս՝ երեկվա սահմռկեցուցիչ լուրը խոսում է այն մասին, որ , այո՛, սովորական դիմում-բողոքներով, նամակներով կամ բանավոր խոսքով մարդը չի կարողանում իրեն լսելի դարձնել:

Տես էջ 2

Doing business-ում Հայաստանի առաջընթացը եւ դեռեւս չլուծված խնդիրները

ԱԲԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Կառավարության նիստը երեկ վարչապետ **Տիգրան Սարգսյանը** սկսեց նախորդ օրը հրապարակված Doing business-ի ցուցանիշներին անդրադառնալով: Նա կարեւոր համարեց, որ 184 երկրների շարքում Հայաստանը հայտնվել է 32-րդ տեղում, դա համարելով բավականին լուրջ առաջընթաց, բայց ընդգծեց, որ դեռեւս շատ անելիքներ ունենք: Առաջինը՝ ծառայությունները փոքր եւ միջին բիզնեսին՝ ջուր, գազամատակարարում, աղբահեռացում, էլեկտրաէներգիա, որտեղ էական փոփոխություններ են կատարվել ծախսատարությունը կրճատելու համար, բայց դեռեւս ցածր տեղերում ենք:

Երկրորդ խնդիրն, ըստ վարչապետի, վերաբերում է մախսազերծման գործընթացին՝ արտաքին առեւտրին, Հայաստանից ապրանքների արտահանումը մինչեւ առաջին նավահանգիստ բոլոր ծախսերին: Համաշխարհային բանկի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ապրանքներ արտահանելիս պահանջվող տեղեկանքների քանակով դեռեւս զիջում ենք մեր հարեւաններին: «Անհրաժեշտ է վերացնել տարբեր տիպի փաստաթղթերի պահանջը, որ դեռեւս օրենսդրորեն կամ ոչ օրենսդրորեն պահանջում ենք, որովհետեւ նորմատիվային դաշտի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդ փաստաթղթերը չպետք է գերազանցեն հինգը, բայց հաշվետվության մեջ նշված է, որ ավելի շատ փաստաթղթեր են պահանջվում», նշեց Տիգրան Սարգսյանը:

Տես էջ 3

Վաղը Նալբանդյան-Մամեդյարով հանդիպում Փարիզում

Այն, ինչ օրերս ղարաբաղյան հակամարտության կարգավորման բանակցությունների միջնորդությամբ զբաղվող ԵԱՀԿ Մինսկի խմբի ռուսաստանցի համանախագահ **Իգոր Պոպովն** էր հայտնել ադրբեջանական «ԱՊԱ» գործակալությանը Հայաստան-Ադրբեջան արտգործնախարարների մոտակա հանդիպման մասին, փաստացի հաստատվում է: Ըստ այդմ, հոկտեմբերի 27-ին Նալբանդյանն ու Մամեդյարովը կհանդիպեն Փարիզում:

Օգոստոսի 31-ին Հունգարիայից Ադրբեջան արտահանձնված Ռամիլ Սաֆարովի դեպքից ու դրան հաջորդած գնահատականներից հետո այս հանդիպումն առանձնակի ոչ մի հույս ներշնչել չի կարող, ավելին, հայկական կողմի վերջերս հնչեցրած չոր ու խիստ քննադատական խոսքերը Բաքվի ուղղությամբ հանդիպման դրական ելքի որեւէ հիմք չեն տալիս:

Հիշեցնենք, որ կոշտ հայտարարություններ Ադրբեջանի հասցեին արվել էին ինչպես Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի, այնպես էլ արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանի կողմից՝ ընդհանրական առումով մնալով այն արձագանքների համատեքստում, որ առաջացավ մարդասպանին Հունգարիայից Ադրբեջանի գնելուց հետո:

Վ. Պ.

Նոր Հարավային Ուելսում կոչ են անում Ավստրալիայի կառավարությանը՝ ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը

Ավստրալիայի Նոր Հարավային Ուելսի խորհրդարանի իրավական խորհուրդը բանաձեւ է ընդունել, որով ճանաչում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախությունն ու հայերի ինքնորոշման իրավունքը, որոնք իրենց ճնշումներ գործադրող Ադրբեջանից անկախ են հռչակել 20 տարի առաջ: Այս մասին տեղեկացնում է Ավստրալիայի Հայ դատի գրասենյակը:

Փաստաթուղթը նախ ընդգծում է, որ 2012-ը շեշտվում է որպես «ԼՂՀ անկախության հռչակման 20-ամյա հոբելյանի տարի՝ ի գիտություն ընդունելով ինքնորոշման իրավունքի ու ազատ եւ ժողովրդավարական հասարակությունում մարդու հիմնարար իրավունքների կարեւորությունը»: Փաստաթղթի համաձայն, վերը նշված ավստրալիական խորհուրդը .ճանաչում է մարդկանց, այդ թվում՝ ԼՂՀ բնակչության ինքնորոշման իրավունքը»:

Փաստաթուղթն ընդգծում է ԼՂ ջանքերը՝ ուղղված «ազատ ու ժողովրդավար հասարակություն ստեղծելուն՝ խորհրդարանական ընտրությունների միջոցով եւ շարունակելով պատասխանատու կառավարություն ձեւավորելու ջանքերը»: Առավել էական է, որ փաստաթուղթն աջակցություն ու նաեւ խրախուսանք է հայտնում ԼՂ ներգրավմանը միջազգային հանրության մեջ՝ հասնելու խաղաղություն ու կայունություն հաստատելու համար տարածաշրջանային խնդիրների լուծմանը:

Բանաձեւը սեփական կառավարությանը կոչ է անում «պաշտոնապես ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը եւ ամրապնդել Ավստրալիայի հարաբերությունները ԼՂ-ի ու նրա բնակիչների հետ»:

Այս փաստաթուղթը, փաստացի, թեեւ ոչ պետության կամ պետության ամբողջական որեւէ ինստիտուտի ընդունած, սակայն ճանաչում է, որը կարող է նպաստել այդօրինակ բանաձեւերի ընդունմանը այլ երկրներում՝ ի պաշտպանություն կամ ի ճանաչում Լեռնային Ղարաբաղի:

Վ. Պ.

Հեռուստամարաթոնը՝ նոյեմբերի 22-ին

«Հայաստան» համահայկական հիմնադրամի գործադիր վարչությունը հայտարարում է, որ հիմնադրամի ամենամյա հեռուստամարաթոնն այս տարի տեղի կունենա նոյեմբերի 22-ին՝ Գոհաբանության օրը, «Մեր գյուղը» խորագրի ներքո: Հեռուստամարաթոնին, ինչպես միշտ, կնախորդի հիմնադրամի Ֆրանսիայի տեղական մարմնի կողմից ավանդաբար կազմակերպվող հեռախոսամարաթոնը, որն այս տարի կանցկացվի նոյեմբերի 15-18-ը:

Մասոնները Երեւանում քաղաքական հարցեր չեն քննարկելու

Ռուբեն Գեւորգյանցն աբսուրդ է համարում տարածված լուրերը

Մասոնները քաղաքականությամբ չեն զբաղվում եւ քաղաքական, ինչպես նաեւ տնտեսական հարցեր չեն քննարկում: Այս մասին «Արմենպրես»-ի հետ զրույցում ասաց Կինեմատոգրաֆիստների միության նախագահ, ռեժիսոր **Ռուբեն Գեւորգյանցը**՝ աբսուրդ համարելով շրջանառվող լուրերն այն մասին, թե մասոնները ժողով են գումարելու գալիք նախագահական ընտրությունները քննարկելու համար:

«Նախ ասեմ, որ մոտակա 7 ամսվա ընթացքում ժողով չի լինելու, եւ մենք քաղաքական հարցեր չենք քննարկում: Մեր ժողովների ժամանակ քննարկվում են հիմնականում ներակումբային հարցեր, ինչպես նաեւ զբաղվում ենք բարեգործությամբ. օրինակ՝ ավտոբուսներ ենք ներկրել, համակարգիչներ ենք գնել դպրոցների համար, եւ այդ բարեգործությունը շարունակվում է մինչեւ հիմա», հայտարարեց Ռուբեն Գեւորգյանցը:

«Արմենիա-Մարիոթ» հյուրանոցից «Արմենպրես»-ին փոխանցեցին, որ մասոնների միջոցառման մասին տեղեկություն ունեն, սակայն դեռ ժամանակահատվածը հստակեցված չէ, շեշտելով, սակայն, որ մասոնները իրենց միջոցառումները հիմնականում «Արմենիա-Մարիոթ»-ում են կազմակերպում:

Աղօրինի կիսակառույցի փլուզումից տուժել են 11 շինարարներ

Երեւանի Խանջյան փողոցի թիվ 20 շենքի մոտակայքում երեկ փլվել էր կիսակառույց շենքը: Փլուզման հետեւանքով փլատակների տակ մնացել էին 11 հոգի, որոնք շինարարական բրիգադի աշխատակիցներն էին: Նրանցից 9-ին մարմնական տարբեր աստիճանի վնասվածքներով շտապ օգնության բրիգադները տեղափոխել են «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն: Մյուս երկու տուժածները բուժօգնություն ստացել են հենց շինհրապարակում, եւ նրանց հիվանդանոց տեղափոխելու անհրաժեշտություն չի եղել:

Առողջապահության նախարարությունից տեղեկացանք, որ վնասվածք ստացած շինարարները հիվանդանոցում դուրս են բերվել շոկային վիճակից, տուժածներից միայն մեկի վիճակն է գնահատվում ծանր: Երեկ հիվանդանոցում տուժածներին այցելել է առողջապահության նախարար Դերենիկ Դումանյանը:

Ըստ նախնական տվյալների՝ միջնապատի փլուզման հետեւանքով նորակառույց շենքի երրորդ հարկը փլվել է երկրորդի վրա: Սակայն մանրամասները պարզելու համար պետք է անցկացվի հետազոտություն:

ԱԻՆ փրկարար ծառայության պետի խորհրդական Նիկոլայ Գրիգորյանի տվյալներով՝ կիսակառույց շենքը պատկանում է «Ջոսե»

համալիրին: Դեպքի վայրում էր նաեւ արտակարգ իրավիճակների նախարարը:

Բացի փրկարար ծառայության աշխատակիցներից՝ դեպքի վայր ժամանել էր նաեւ օպերատիվ քննչական խումբը, որը տեղում կատարում էր ուսումնասիրություններ: Փլուզման փաստի առթիվ հարուցվել է քրեական գործ, որը քննվում է ոստիկանության Կենտրոնի քննչական բաժնում: Եվ համապատասխան փորձաքննությունից հետո հնարավոր կլինի խոսել փլուզման պատճառներից:

Առայժմ հայտնի է, որ Խանջյան 20 հասցեի փլված կիսակառույցը հետագայում դառնալու էր բացօթյա սրճարան ու զվարճալիքների կենտրոն, եւ շինարարությունն իրականացվում էր ապօրինի: Այս մասին news.am-ի թղթակցին հայտնել է Երեւանի քաղաքապետարանի տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչության պետ Արթուր Գեւորգյանը: Քաղաքապետարանն արձանագրել է, որ սահմանված ժամկետում շինարարությունը չեն հասցրել ավարտին, հետեւաբար այդ հիմքով կազմվել է արձանագրություն ու նշանակվել ավելի քան 2 միլիոն դրամի տուգանք: Արթուր Գեւորգյանի փոխանցմամբ՝ քաղաքապետարանը դադարեցրել է շինարարությունը, սակայն կառուցապատողն առանց թույլտվության շարունակել է շինարարական աշխատանքները:

Ի. Պ.

Իրացման հերթական գոտու բնակիչների դժգոհությունը՝ ուղղված երկրի նախագահին

Այս դեպքում եւս կառուցապատողը չի կատարում իր պարտավորությունները

Երեւանի՝ հանրային գերակա շահ հայտարարված եւս մեկ տարածքի բնակիչներ բաց նամակով դիմել են երկրի նախագահին: Խոսքը Ամիրյան 4/14, 4/16, 4/18, 4/20,4/22,4/24 հասցեներում գրանցված բնակիչների մասին է: Նրանք իրենց դժգոհությունն են հայտնում այն բանից, որ իրենց համար կառուցվող Ամիրյան 4 շենքի շինարարությունը պետք է ավարտվեր երեք ամսվա ընթացքում, բայց անցել է մեկ տարուց ավելի, «իսկ շենքի շինարարությունը չի ավարտվել ու մոտակա մի քանի տարիներին չի էլ ավարտվի, եւ մենք շարունակում ենք վարձով ապրել»: Նրանք նշում են նաեւ, որ չեն կատարվում իրենց եւ կառուցապատողի միջեւ կնքված հաշտության պայմանագրի կետերը:



«Ստացվում է, որ ընդառաջելով մեր պետությանը եւ կնքելով հաշտության պայմանագրերը, մենք քառակի ենք տուժում՝ հրաժարվելով պայմանագրերով նախատեսված տույժերից, կառուցապատողի փոխարեն վճարելով հողի հարկը, տեղադրելով հաշտության պայմանագրով նախատեսված, բայց չտեղադրված դռներն ու լուսամուտները, պատերի շարումը, ջրի եւ կոյուղու գծերը, եւ շարունակելով վճարել վարձակալած բնակարանների համար: Այդ որ օրենքով է, որ պետական կարիքների համար իրացված բնակարանների փոխարեն ստանալիք բնակարանների համար մենք պետք է վճարենք հողի հարկ», ասված է բնակիչների բաց նամակում:

Ամիրյան 4/14, 4/16, 4/18, 4/20, 4/22, 4/24 հասցեներում ապրող իրացման գոտու բնակիչները իրենց տարկուսանքն են հայտնում, որ չկա պետական մի մարմին, որ պարտավոր լինի հետեւել քաղաքաշինարարի եւ կառուցապատողի միջեւ կնքված պայմանագրով շենքի շինարարության վերջնաժամկետի պահպանմանը: «Թե՞ լիակատար անտերություն է եւ պետության հետ կնքված պայմանագրի կատարումը թողնված է շենքի տեր օլիգարխի քմահաճույքին», արդարացի հարցադրում են բարձրացնում նրանք:

«Մեծարգո՛ Պարոն Նախագահ, խնդրում ենք միջամտել ու վերականգնել օրինականությունը եւ արդարությունը», այս տողերով է ավարտվում այս տարածքի բնակիչների բաց նամակը:

Մեր կողմից ավելացնենք, որ նման կամ գրեթե նման վիճակում են հայտնվել Երեւանի իրացման գոտի հայտարարված մյուս տարածքների բնակիչները: Նրանք ասես բնակվում են աղետի գոտում, քանի որ նրանց մի մասը զրկվել է բնակարանից, որովհետեւ կառուցապատողները չեն կատարում այդ մարդկանց նոր բնակարան հատկացնելու պայմանագրային պարտավորությունները, իսկ մյուսներն էլ չեն կարողանում ազատորեն տիրապետել իրենց գույքը, քանի որ դարձյալ կառուցապատողները չեն կատարում նրանց բնակարանային կամ գումարային փոխհատուցում տրամադրելու իրենց պարտավորությունները կամ հրաժարվել այդ տարածքների ձեռք բերման եւ կառուցապատման իրավունքից:

ԱՐԱ ՄԱՐՏԻԲՈՍՅԱՆ

Ճկույթ կտրե՞նք, որ աշխատեք

1-ին էջից

Այլապես ինչպե՞ս լսել կամ ընթերցել այն լուրը, թե «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում հոկտեմբերի 22-ից հացադուլ հայտարարած ու հացադուլի ճանապարհով անգամ իր խոսքը լսելի չդարձրած դատապարտյալ մարդը՝ Սերոբ Մխիթարյանը, այլ միջոց չունենալով համապատասխան իրավասուների ուշադրությունն իր բողոքի վրա բեւեռելու, կտրել է իր ճկույթը եւ ուղարկել «Հեռարան» կայքի խմբագրություն, իսկ նրա երկու բախտակիցներն էլ կարել են բերանները:

Այդ ի՞նչ հիմնարկ է «Նուբարաշեն» ՔԿՀ-ն, արդյո՞ք Բաբվի բանտը կամ մի հարյուր տարի առաջվա Շուշիի սարսափելի բերդը, որոնց մասին էին միայն սովորաբար այս կարգի սահմռկեցուցիչ միջադեպեր պատմում: Իսկ ի՞նչ է զգում ընթերցողը, երբ այդպիսի լուր է կարդում, ի՞նչ ցանկություն է առաջանում. ճիշտ եք, նախ՝ տասնմեկհարկանի մի հայհոյանք է ուղիղ գծով մինչեւ վերեւ բոլոր իրավասուներին ուղարկվում, հետո դառնություն եւ անզորություն է պատում նրան, թե այս ինչ երկրում ենք ապրում, հետո լսողները միմյանց հետ փոխանակում են սովորաբար անզորությունից ծնվող հայտնի խոսքերը, թե այս երկիրը երկիր չէ, այստեղ մարդը մարդ չէ, այստեղ ոչ ոք իր իրավունքը չի կարող պաշտպանել, եւ այսպես շարունակ:

Ու վերջում շրխկում է էլ ավելի հայտնի խոսքը՝ երթալը կփրկի: Բա ի՞նչ մտածի մարդը, որ իշխանամետ կայքից իմանում է դատապարտյալի հուսահատության ճիչի մասին, թե՝ 4 հոգով հացադուլի են, բայց ոչ բժիշկ են կանչում, ոչ շան տեղ են դնում, ոչ էլ լսում են դատապարտյալին, որը նույնպես մարդ է, ազատազրկված, բայց՝ մարդ: Ու էդ ազատազրկված մարդը, որ տեսնում է էլ ոչ մի միջոց չունի խոսքը հասցնելու իրավասուներին՝ վերցնում ու ճկույթն է կտրում եւ ուղարկում լրատվամիջոցի, որ գոնե լրատվամիջոցներն իր ձայնը տեղ հասցնեն:

Բա երկրի նախագահ, չբռնես ու էդ ողջ քրեակատարողական հիմնարկի ղեկավարությանն ուղարկես այնտեղ, որտեղ պետք է, քանի որ հենց նախագահին են պատվից գցել, հենց նախագահն է նստում ու խորհրդակցություն անում, թե աշխատանքի ձեւը պետք է փոխվի, իրավապահ համակարգը պետք է վստահություն եւ պատկառանք ներշնչի, մեզ մոտ մարդու իրավունքները պետք է պաշտպանված լինեն, իրավապահն էլ՝ պրոֆեսիոնալ ու բարեխիղճ: Որտեղից վստահություն ներշնչվի, որ 20 տարեկան դատապարտյալի մայրն ասում է, թե երկուշաբթի օրվանից որդին հացադուլ է հայտարարել, ոչ ոք նրա ձայնը չի լսում: Մարդը դատվել է գողության համար, բայց ասում է՝ իրեն սխալ են դատել, վերանայեք գործը: Չենք ասում՝ դատապարտյալը 100 տոկոսով ճիշտ է, էս գլխից նման բան ասել չենք կարող, բայց բողոքում է, չէ՞, սխալ դատավճռից, ու մեր երկրում վերեւից ներքեւ բոլորը գիտեն, թե, իրոք, ինչքան կողմնակալ ու սխալ դատավճիռներ են լինում: Ուրեմն ինչո՞ւ պիտի հասարակությունը հավատա, որ տվյալ դեպքում դատավճիռ արձակողներն են ճիշտ, կամ ինչո՞ւ է խանգարում լսել դատապարտյալի բողոքը: Ճկո՞ւյթը պետք է կտրի, որ ՄԻՊ-ը սուրա քրեակատարողական հիմնարկ՝ երեկ ՄԻՊ-ի արագ արձագանքման խումբը 4 բողոքող դատապարտյալների գործով մեկնել էր «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկ, շատ արագ արձագանքման խումբ է, որ հացադուլի չորրորդ օրը, այն էլ ճկույթ կտրելուց ու բերան կարելուց հետո է հայտնվում տեղում: Դե գոնե էդ գնով ՄԻՊ խումբը դիմումները վերցրել է բողոքողներից:

Ընդհանրապես՝ ե՞րբ պետք է մերոնք մարդուն լսել սովորեն, ժամանակին օգնեն՝ իրավական համակարգից մինչեւ պետական այլ կառույցներ: Ամիսներ առաջ չէ՞ր, որ նախկին սպան ինքնահրկիզման միջոցով իր հարցերը լուծեց, ու այն էլ ի վերջո դրանք լուծվեցին ոչ թե իրավասուների ինքնակամ բարի կամքով, այլ... Հայաստանի նախագահի անձնական միջամտությունից հետո: Հիմա ոնց անեն բոլորը, որ անձամբ հասնեն Հայաստանի նախագահին ու իրենց հարցերը լուծեն: Թե վերջապես մերոնք կսովորեն աշխատել առանց «կենտրոնից» ցուցումների եւ համակարգ գործի կգցեն: Թե չէ նախագահին կամաց-կամաց դարձնում ենք...ԺԷԿ-ի պետ, ու բոլոր հարցերը անձամբ ուղղում նրան:

ԻՆՉԻ՞Ց ՀԱՎԱՏԱԼ

Ժողովուրդը իշխանության արարքներում կեղծիք է տեսնում, մինչդեռ...

Վերջին մի քանի ամիսների ամենաշատ քննարկված թեման ՀՀ նախագահ Ս. Սարգսյանի անցկացրած խորհրդակցություններն ու ելույթներն են: Ամեն ինչ սկսվեց սեպտեմբերի 16-ին կառավարության նիստի ժամանակ հնչեցրած սուր քննադատությունից եւ դրան հաջորդ այցելություններից մի շարք գերատեսչություններ: Նախագահը շատ խիստ խոսեց ներկա իրավիճակի մասին եւ մի շարք հանձնարարականներ տվեց գերատեսչությունների ղեկավարներին:

Սակայն, ինչպես պարզվում է, բոլորը չէ, որ հավատում են այս ամենի անկեղծությանը: ԶԼՄ-ները եւ շարքային քաղաքացիները միայն մեկ բան են ասում՝ նախընտրական PR: Փորձենք հասկանալ իրո՞ք այդպես է:

Ժողովրդի հիմնական շեշտադրումն այն է, որ արդյոք Սերժ Սարգսյանը իր ղեկավարման 4 տարիների ընթացքում չէ՞ր մտածել երկրի առջեւ ծառացած բազմաթիվ խնդիրների մասին, չէ՞ր տեսնում դրանք կամ տեղյակ չէ՞ր եւ միայն հիմա է այդ մասին բարձրաձայնում: Ինչ-որ առումով սա ճիշտ է: Բայց եկեք հիշենք, թե ինչ էին անում երկրի նախկին նախագահներն իրենց նախընտրական քարոզարշավի ժամանակ: Եթե խոր մտածենք՝ լավ է, որ Սերժ Սարգսյանը բավարարվում է ընդամենը պաշտոնանկություններով եւ խիստ քննադատություններով, այլ ոչ թե մարդկանց սպանելով, բռնի ուժով բերանները փակելով եւ այլ ոչ սահմանադրական գործողություններով: Ըստ իս՝ նախագահը փորձում է ժողովրդի վստահությունը ձեռք բերել եւ ապացուցել, որ իր խոսքը գործ է: Նա արդեն կորցրել է մի մեծ ուժ՝ ԲՀԿ-ն: Չնայած ԲՀԿ-ն դեռ պաշտոնապես չի հայտարարել կոալիցիայից դուրս գալու մասին եւ դե յուրե մնում է կոալիցիայի անդամ, բայց դե ֆակտո նա այլընտրանքային ընդդիմություն է: Այդ իսկ պատճառով նախագահին պետք է ժողովուրդը: Նա չգնաց երկու նախկին նախագահների ճանապարհներով: Նա նորամուծություն մտցրեց: Նախագահը փորձում է երկիրը մաքրել երկար տարիներ այստեղ բուն դրած կրիմինալ դեմքերից, եւ կարծես դրանք մի թելով կապված են իրար հետ: Նա փորձում է նոր, մաքուր մարդկանց բերել երկրի ղեկավարություն: Օրինակները բազմաթիվ են:

Շատ շատերը չեն հավատում եւ ասում են, որ ընտրություններից հետո ամեն ինչ մոռացվելու է, ինչպես մյուս ընտրությունների դեպքում եղավ: Թույլ տվեք չհամաձայնել: Ներկայումս այնպիսի իրավիճակ է ստեղծվել, որ ժողովուրդը ուղղակի չի թողնի, որ խոստումները չկատարվեն, եւ այս իրավիճակը շարունակական է լինելու: Եթե իշխանությունները ընտրություններից հետո փորձեն մոռացության մատնել իրենց խոստումները, ժողովուրդը կընդվզի: Մարդիկ նորից դուրս կգան փողոց: Դուրս կգան փողոց այնպես, ինչպես արեցին Մաշտոցի այգու հետ կապված իրավիճակում, ինչպես արեցին Փակ շուկայի դեպքում, եւ այլն, եւ այլն: Նրանք ուղղակի կսիրեն գործել:

Քանի որ սա նորամուծություն է, այդ իսկ պատճառով շատերը չեն ուզում հավատալ: Այս դեպքից առաջ չի եղել որեւէ նախադեպ, որ երկրի առաջին դեմքը բացեիբաց խոսի երկրի խնդիրների, կաբառակեր ու ստոր պաշտոնյաների եւ արվեստի քայլերի մասին: Չի եղել, որ մարդիկ ինչ-որ խնդրի համար դուրս գան փողոց եւ լուծում գտնեն: Չի եղել, որ ընդդիմությունը կարողանա Ազգային ժողովում մանդատ եւ հանձնաժողովի նախագահի աթոռ ստանալ: Վերջին խորհրդարանական ընտրությունները ցույց տվեցին, որ Հայաստանում էլ կարող են լինել նախորդներից շատ ավելի արդար եւ ժողովրդավարական ընտրություններ: Ճիշտ է, եղան թերություններ, բայց եթե համեմատենք մնացած ընտրությունների հետ, այս մեկը ուղղակի հրաշալի էր: Դա նաեւ արձանագրեցին արտասահմանից եկած դիտորդները:

Այս առումով նախագահի ելույթները վստահություն են ներշնչում: Կարելի է հավատալ, որ նա փորձում է մաքրել երկիրը: Բայց դա հեշտ գործ չէ, քանի որ կան «100 տարվա գելեր», որոնց յուրովի մոտեցում է պետք ցուցաբերել: Համենայն դեպս, վերջին ամիսներին կատարվում են նախագահի հրամանները, թե ինչ կլինի ապագայում՝ կտեսնենք ընտրություններից հետո:

ԱՐՄԵՆ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Պոկվել է նորակառույցի վերելակը. կան զոհեր

Երեկ երեկոյան Երեւանի Սասնա Ծռեր փողոցի թիվ 2 հասցեում գտնվող նորակառույց շենքի 17-րդ հարկից պոկվել է բեռնատար վերելակի ճոպանը եւ վերելակն ընկել է հորանում աշխատողների վրա: Վերելակը պոկվել է բեռներն իջեցնելու պահին: Շտապ օգնության աշխատակիցները տուժածներին տեղափոխել են «Արմենիա» հանրապետական բժշկական կենտրոն:

Արտակարգ իրավիճակների նախարարության (ԱԻՆ) նախնական տվյալներով՝ կան երկու զոհ ու երկու տուժած: Նախարարության տվյալներով՝ վերելակն ինքնաշեն է, ԱԻՆ ռեեստրում չի գրանցվել ու փորձաքննություն չի անցել:

Ի. Պ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության ԻԱ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 0010, Հանրապետության 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
www.azg.am
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱԼԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահություն (գովազդ) հեռ. 582960
060 271112
Լրագրողների սենյակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայություն հեռ. 060 271115
Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

ԱԶԳ

Մեկնաբանություն

Հայաստանում աշխատուժի պակաս կա

Տեղեկատվական տեխնոլոգիաների, քիմիական արդյունաբերության եւ այլ ոլորտներում

Վարչապետ **Տիգրան Սարգսյանը** երեկ անդրադարձավ մեր երկրում առկա աշխատուժի պակասի խնդրին: «Այսինքն, մենք գործ ունենք կառուցվածքային գործազրկության խնդրի հետ: Այս խնդիրը մեր առջեւ սրությամբ դնում է տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը: Երկու օր առաջ անցկացրինք խորհրդի նիստ. ոլորտի բարձր տեմպերով աճը վանգվում է միայն մեկ պատճառով, որ անհրաժեշտ են աշխատանքային ռեսուրսներ: Ոլորտը տարեկան աճում է 15-20 տոկոսով, ձեռնարկությունների քանակն արդեն կազմում է 300», ասաց նա, տեղեկացնելով, որ էապես ավելացվելու է համալսարաններում այդ բնագավառի պետական պատվերը: «Քիմիական արդյունաբերությունում, քաղաքաշինարարությունում եւս նմանատիպ խնդիրներ են դրվում մեր առջեւ, որ աշխատուժի պահանջարկ կա եւ մենք չենք կարողանում բավարարել այդ պահանջարկը: Այս խնդիրը բոլորիս պետք է մտահոգի եւ մեզ համար դառնա առաջնային լուծում պահանջող խնդիրներից», ավելացրեց վարչապետը:

Էներգետիկայի եւ բնական պաշարների փոխնախարարը տեղակացրեց, որ մոտ 150 տարբեր պրոֆիլի մասնագետների կարիք կա Վանաձորի քիմպրոմի թողարկման հետ կապված: Երեւանի քաղաքապետ **Տարոն Մարգարյանը** հայտնեց քաղաքապետարանի ենթակայության հիմնարկներում՝ տրանսպորտի, կապի, կանաչապատման, սանմաքրման, մոտ 300 աշխատողի պահանջի մասին՝ հիմնականում վարորդների, կանաչապատման եւ սանմաքրման աշխատողների: «Միջին աշխատավարձը կազմում է 80 հազար դրամ, եւ այդտեղ մենք խնդիրներ ունենք», ասաց քաղաքապետը:

Վարչապետ Տիգրան Սարգսյանը անհրաժեշտ համարեց, որ այս հարցով էկոնոմիկայի նախարարությունն իրականացնի վերլուծական աշխատանքներ եւ առաջարկություններ ներկայացնի: «Խոսքն այն մասին է, որ մենք պետք է մեր երկրում բարձրացնենք աշխատանքի արտադրողականությունը, որը պետք է զուգակցվի աշխատավարձերի բարձրացումով», ասաց նա:

Նիստին հաջորդած մամուլի ասուլիսի ժամանակ էկոնոմիկայի նախարար **Տիգրան Դավթյանն** ասաց, որ աշխատաշուկայի օպտիմալացման խնդիրներ կան, քանի որ վարձատրության մակարդակը հաճախ չի բավարարում մարդկանց: Նրա կարծիքով, այս խնդրի լուծումը որոշակի ժամանակ է պահանջում:

Որտե՞ղ դիմեն, օրինակ, տեղեկատվական տեխնոլոգիաների մասնագետները հարցին պատասխանելով, էկոնոմիկայի նախարարն ասաց, որ այս ոլորտի մասնագետներն աշխատանքի համար կարող են դիմել էկոնոմիկայի նախարարության տեղեկատվական տեխնոլոգիաների վարչություն, «Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամ» եւ Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Ինտերնետ հասանելիություն՝ Հայաստանի ամերիկյան համալսարանի գրեթե ամբողջ տարածքում

ՎիվաՍել-ՄՏՍ-ի տեխնիկական աջակցությունը կրթական համակարգում լավագույն ներդրում կատարելու նպատակ ունի

Բարձրագույն կրթության միջազգային ծրագրեր իրականացնող բուհն ապահովվել է ինտերնետ հասանելիությամբ:

Հայաստանի ամերիկյան համալսարանի հետ ՎիվաՍել-ՄՏՍ-ի համագործակցությունը մեկնարկել է շուրջ 5 տարի առաջ: Ընկերության մասնագետների կողմից ուսանողների համար պարբերաբար կազմակերպվել են դասընթացներ, մասնագիտական պրակտիկա, տեսական գիտելիքները գործնականի հետ համադրելու փորձի փոխանակում: Տարբեր ծրագրերի իրականացման այդ պատրաստակամությունը դրսեւորվել է սերունդների նկատմամբ պատասխանատվության գիտակցությամբ:

Որակյալ աշխատուժի կարեւորությունը գնահատող հեռահաղորդակցության առաջատար օպերատորը հերթական քայլով խրախուսում է որակյալ կրթություն ստանալու ուսանողների ցանկությունը: Համալսարանի 2 մասնաշենքերը գրեթե ամբողջությամբ ապահովվել են ինտերնետ հասանելիությամբ: ՎիվաՍել-ՄՏՍ-ն այս բուհի» տրամադրել է

«Home-Zone Turbo» փաթեթի շրջանակում գործող 10 հատ 3G երթուղիչ, ինչպես նաեւ Wi-Fi ապահովող տարբեր հզորության սարքավորումներ: Հզոր գործիք համարվող համացանցից անկաշկանդ օգտվելու պրոֆեսորադասախոսական կազմի երբեմնի նպատակն այժմ արդեն իրականություն է:

«Կարեւոր է ոչ միայն կրթվելու ցանկությունը, այլեւ՝ նյութի մատուցման ձեւը: Ժամանակակից աշխարհը թելադրում է իր պահանջները եւ պարտավորեցնում լինել ճկուն՝ որակյալ կրթություն ստանալու հարցում: Մենք պատրաստ ենք խրախուսել հետազոտող ուսանողի կրթական պահանջները», ասել է ՎիվաՍել-ՄՏՍ-ի գլխավոր տնօրեն **Ռալֆ Յիրիկյանը**:

Արտաքին շուկայում Հայաստանի անվիճելի մրցունակության համար, ՎիվաՍել-ՄՏՍ-ը կարեւոր է համարում գիտակ կադրեր պատրաստելու բուհերի վճռականությունը:

ՀԱՐԿԱՅԻՆ ՎՃԱՐՆԵՐ

Էլեկտրոնային ստորագրությունները կտրվեն անվճար՝ մինչեւ նոյեմբերի 30-ը դիմողներին

Եկամտային հարկի եւ պարտադիր կուտակային վճարի անձնավորված հաշվառման համակարգի 2013-ից ներդրման հետ կապված, կառավարությունը երեկ որոշում ընդունեց հարկ վճարողների համար նույնականացման քարտերի միջոցով էլեկտրոնային ստորագրություն ձեռք բերելու հետ կապված պապասարկման ծախսերն ամբողջությամբ փոխհատուցել: Փոխհատուցումն առնչվելու է այն տնտեսվարողներին, որոնք էլեկտրոնային ստորագրություն ստանալու համար կդիմեն մինչեւ այս տարվա նոյեմբերի 30-ը:

Կառավարության նիստի ավարտից հետո այս թեման լրագրողների համար մանրամասնեց պետական եկամուտների կոմիտեի փոխնախագահ Արմեն Ալավերդյանը: Նա մասնավորապես հայտնեց, որ մինչեւ նոյեմբերի 30-ը դիմողների համար էլեկտրոնային ստորագրությունը կտրամադրվի անվճար եւ դրա համար սահմանված 3000 դրամը կվճարի կառավարությունը: Իսկ այն տնտեսվարողները, որոնք հաշվետվությունները հիմա ուղարկում են էլեկտրոնային եղանակով, անվճար կանցնեն նոր համակարգին:

Մեր հարցին, թե 2012-ի եռամսյակային եւ տարեկան հաշվետվությունները նո՞յնպես պետք է ներկայացվեն էլեկտրոնային եղանակով, Արմեն Ալավերդյանը պատասխանեց, որ էլեկտրոնային եղանակով հաշվետվությունները վերաբերելու են միայն եկամտային հարկին, որի վերաբերյալ պետք է ներկայացվեն ամենամսյա հաշվետվություններ: Մյուս հաշվետվությունները պետք է ներկայացվեն ներկայիս ձեւով:

Քաղաքիկ արդյունք՝ անկախ Հայաստանի պատմության մեջ

Ավարտվել են 2012 թվականի դպրոցականների առարկայական միջազգային օլիմպիադաները, որտեղ Հայաստանի աշակերտները սահմանել են յուրահատուկ ռեկորդ անկախ Հայաստանի պատմության մեջ՝ միջազգային օլիմպիադաներում նվաճելով 16 մեդալ: 2012 թվականին «Մաթեմատիկա», «Ֆիզիկա», «Կենսաբանություն», «Քիմիա», «Ինֆորմատիկա» եւ «Աստղագիտություն» առարկաների գծով առարկայական միջազգային օլիմպիադաներին մասնակցել է 29 հայ դպրոցական՝ նվաճելով 16 մեդալ՝ 1 ոսկի, 2 արծաթ, 13 բրոնզ եւ 5 գովասանագիր: Առհասարակ, բոլոր առարկաների գծով այս տարի հայ օլիմպիականները գրավել են մրցանակային տեղեր: Ի դեպ, 2003 թվականին հայ աշակերտները նվաճել են 11, 2004 թվականին համապատասխանաբար՝ 14, 2005-ին՝ 10, 2006-ին՝ 5, 2007-ին՝ 8, 2008-ին՝ 5, 2009-ին՝ 7, 2010-ին՝ 7 եւ 2011-ին՝ 6 մեդալ: Այսպիսով, 2012 թվականի գիտելիքի հայ դեսպաններն ու մերօրյա հերոսներն են՝

Մաթեմատիկա
Մինասյան Էդգար- արծաթ, ֆիզմաթ դպրոց,
Քոսյան Արսյոմ- բրոնզ, ֆիզմաթ դպրոց,
Մնացականյան Գեւորգ- բրոնզ, Վանաձորի Էվրիկա Վարժարան,
Ֆիզիկա
Ավետիսյան Վարդան-բրոնզ, ֆիզմաթ դպրոց,
Գեւորգյան Վիրաբ-բրոնզ, Քվանտ վարժարան
Կենսաբանություն
Ծերունյան Վարդգես- բրոնզ, ֆիզմաթ դպրոց,
Քիմիա
Գալոյան Ալեքսեյ-բրոնզ, Քվանտ վարժարան,
Չիթչյան Դավիթ-բրոնզ, Քվանտ վարժարան,
Ղահրամանյան Վահե-բրոնզ, ֆիզմաթ դպրոց,
Գրիգորյան Լիլիթ-բրոնզ, Ա.Շիրակացու ճեմարան,
Ինֆորմատիկա
Մամիկոնյան Տիգրան-բրոնզ, ֆիզմաթ դպրոց,
Հարությունյան Հրայր-բրոնզ, Գորիսի թ.4 ավագ դպրոց,
Աստղագիտություն
Մարտիրոսյան Գեւորգ -ոսկի, ֆիզմաթ դպրոց,
Ասլանյան Արսեն- արծաթ, Երեւանի ՀՊՃՀ ավագ դպրոց,
Մամբրեյան Վարդգես- բրոնզ, ֆիզմաթ դպրոց,
Բաբախանովա Սիրանուշ- բրոնզ, ֆիզմաթ դպրոց:

Doing business-ում Հայաստանի առաջընթացը եւ ...

1-ին էջից

Հաջորդը ապրանքը մինչեւ Փոթի հասցնելու խնդիրն է, որ շատ թանկ է՝ պայմանավորված ոչ միայն Հայաստանի ներսում ծախսատարությամբ, այլեւ Վրաստանի տարածքով ապրանքները մինչեւ Փոթի հասցնելով: Մեկ կոնտեյների համար դա կազմում է 1800 դոլարից ավելի, ինչը էապես մեծացնում է բիզնեսով զբաղվելու դժվարությունը: Նշելով, որ հիշատակված 1800 դոլարից 300-350 դոլարը բրոքերների ծառայության գինն է, վարչապետը էկոնոմիկայի նախարարին հանձնարարել է ուսումնասիրել, թե արդյոք միջազգային գների համեմատ այդ գինը խելամի՞տ է եւ կարելի՞ է նվազեցնել:

Հաջորդ խնդիրը վերաբերում է արդարադատության ոլորտին: Բիզնեսի շրջանակներում կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ դատական վեճերը տեւում են մեկ տարուց ավելի: «Սա շատ ցածր ցուցանիշ է», շեշտեց Տիգրան Սարգսյանը:

«Այսօր մենք մտնում ենք աշխարհի լավագույնների 20 տոկոսի մեջ, բայց մեզ համար նպատակը պետք է լինի մտնել առաջին քսանյակի, եթե ոչ տասնյակի մեջ: Իսկ դա նշանակում է, որ իմ թվարկած ոլորտներում արմատական փոփոխություններ պետք է իրականացնենք, եւ ցանկալի է հնարավորինս շուտ», ասաց վարչապետը՝ հանձնարարելով էկոնոմիկայի նախարարությանը, ֆինանսների նախարարությանը, պետական եկամուտների կոմիտեին, արդարադատության նախարարությանը մինչեւ նոյեմբերի 15-ը ներկայացնել Doing business-ի միջոցառումների նոր ծրագիր, որոնք հաշվի կառնեն նրա թվարկած ոլորտներում էական փոփոխությունների անհրաժեշտությունը:

Doing business 13-ի ցուցանիշների մասին հրավիրված մամուլի ասուլիսի ժամանակ խոսեցին նաեւ էկոնոմիկայի նախարար Տիգրան Դավթյանը եւ փոխնախարար Կարինե Մինասյանը: Նրանք նշեցին, որ առաջընթացն ավելին էր, քան սպասվում էր, որ այս ցուցանիշով Հայաստանը հայտնվել է Արեւմտյան Եվրոպայի երկրների շարքում՝ առաջ անցնելով Բելգիայից եւ զիջելով Նիդեռլանդներին: Սակայն էկոնոմիկայի նախարարը նշեց, որ հետեւողական աշխատանք է անհրաժեշտ գործարար եւ ներդրումային միջավայրի հետագա բարելավման համար:

ԱԶԳ

Վերլուծություն

Կրկին հեռավոր, բայց մերիմ Ղազախստանի մասին

Այս վերլուծականը գրելու առիթը վերջին օրերին Հայաստան-Ղազախստան հարաբերությունների ներկա վիճակին եւ հեռանկարներին առնչվող աշխույժ քննարկումներն են տարածաշրջանային եւ միջազգային բարդ, երբեմն մտահոգիչ համատեքստում: Մեր հասկանալի անհանգստություններից մեկը Թուրքիայի, Ադրբեջանի, Ղազախստանի եւ Ղրղզստանի միջեւ ձեւավորված Թյուրքական խորհուրդն է: Ավելի ճիշտ, Ադրբեջանի եւ Թուրքիայի նախաձեռնությամբ այն հայերի եւ Հայաստանի դեմ թշնամության գործիք դարձնելու անհանգստությունը: Բայց Ղազախստանը ԱՊՀ եւ ՀԱՊԿ հիմնադիր անդամներից մեկն է եւ մեր ռազմաքաղաքական դաշնակիցը: Ընդ որում իր պարականությունները եւ վերաբերմունքը մեր պետության նկատմամբ բծախնդրորեն հղկած եւ լավ տրամադրված դաշնակիցը: Փորձենք ստորեւ միասին մտածել մեր փոխհարաբերությունների, իրատեսական սպասելիքների եւ համագործակցության գծագրվող ուղղությունների շուրջը, որոնք հնարավոր են քաղաքական եւ աշխարհայացքային ավելի խոշոր մոտեցումների ծիրում:

Ղազախստանում սիրում եւ հարգում են հայերին

Պաշտոնական տվյալներով՝ այսօրվա Ղազախստանում ապրում է ավելի քան երեսուն հազար հայ: Ոչ պաշտոնական տվյալներով՝ հայերի թիվը շատ ավելի է: Ղազախստանի անկախության քսան տարիների ընթացքում հայերի թիվը ավելացել է առնվազն յոթ անգամ, եւ այսօր հայերն այդ երկրի լիարժեք քաղաքացիներն են, որոնք միանշանակորեն օգտվում են ժամանակակից ղազախական հասարակության մեջ տիրող ազգամիջյան ներդաշնակության բարեբեր պտուղներից: Մենք գիտենք, որ Ղազախստանի տասներկու քաղաքներում գործում են հայկական համայնքային, մշակութային կենտրոններ, իսկ Ալմաթիում օծվել է հայկական եկեղեցի: Ասանայի հայերը մտածում են մայրաքաղաքում նույնպես եկեղեցի կառուցելու մասին: Ղազախստանի հայտնի հայերի անունները տարբեր առիթներով հիշվում են ամեն անգամ, երբ պետք է ցույց տալ մյուս ազգերի ներկայացուցիչների հաջողությունները նորանկախ Ղազախստանում: Ղազախստանի պատմության ամենահայտնի հայը Խորհրդային Ղազախստանի կոմունիստական ղեկավար Լեւոն Միրզոյանն է եղել: Պետական գործիչ, որի անունով փողոցներ են կոչվել ղազախական քաղաքներում ու դպրոցներ անվանակոչվել: Հայ մարդ, որի անգնահատելի ավանդը ղազախական գիտության, մշակույթի եւ արվեստի մեջ երախտագիտությամբ է հիշվում մինչեւ հիմա: Մարդ, որին սալինյան ռեպրեսիաների տարիներին գնդակահարել են իբրեւ «ղազախ նացիոնալիստի»: Լեւոն Միրզոյանի մասին հիշողությունները մեր իրականության մեջ միանշանակ չեն: Լեռնային Ղարաբաղում, մասնավորապես, մինչեւ հիմա հիշում են, որ նա մեկն էր այն հայ կոմունիստներից, որոնք ավարտին հասցրեցին բոլշեւիկյան Կավբյուրոյի հայտնի որոշումը՝ Լեռնային Ղարաբաղը Խորհրդային Ադրբեջանին բռնակցելու մասին՝ կազմակերպելով խիստ ձեւական «հանրաքվե» այդ անվանված Արցախում: Մենք հիշում ենք, որ դրան հաջորդած ապստամբությունը դաժանորեն ճնշվեց խորհրդային բանակի կողմից: Բայց մեր ժողովուրդը հայազգի գործիչների գնահատականներում միշտ էլ ավելի խոր եւ իմաստուն է եղել: Եթե միանշանակորեն մերժենք այդ մարդկանց պատմական դերը, մանավանդ նրանց հետագա ծառայություններն այլ տեղերում, ապա պիտի մերժենք նաեւ Ալեքսանդր Մյասնիկյանի, Անաստաս Միկոյանի եւ շատ ուրիշների խաղացած դերը մեր պատմության մեջ: Բայց չէ՞ որ մեր ժողովրդի պատմական հիշողությունը կառուցված է ավելի զգայուն եւ խոր մոտեցումների վրա: Չէ՞ որ մեր պատմության անջնջելի կերպարներն են շատ նշանավոր հայեր, որոնք ապրելով աշխարհի տարբեր ծեգերում, զարմանահրաշ հաջողություններ են հասել ու անջնջելի հետք թողել շատ ժողովուրդների պատմական ճակատագրերում: Այդպիսին էր Եգիպտոսի վարչապետ Նուբար Փաշան: Այդպիսին էր կայսերական Ռուսաստանի կառավարության նախագահ կոմս Լոռիս-Մելիքովը: Այդպիսին էր Բուլղարիայի թագավոր Սամուիլ Առյուծասիրտը: Այդպիսին էին Ռումինիայի հոսպոդարները (տիրակալները) հայկական Սերպեգա գերդաստանից: Էլ չենք խոսում Բյուզանդիայի հայազգի կայսրերի մասին, որոնց վերաբերմունքը բուն Հայաստանին եւ մեր եկեղեցուն նույնպես բարդ եւ, մեղմ ասած, ոչ միանշանակ գնահատական ունի: Բայց սա մեր պատմությունն է, եւ նրանք բոլորն այն հզոր հայերն են, որոնցով շատ երկրներում ճանաչել ու գնահատել են հայերին: Հիմա դառնանք Ղազախստանին: Լեւոն Միրզոյանի ծառայությունները Ղազախստանում իր կյանքի վերջին շրջանում այնքան հսկայական են եղել, որ բազմաթիվ ղազախներ մինչեւ այսօր իրենց երեխաներին հենց նրա պատվին Մըրզաջան են անվանակոչում: Հայերին այսօր Ղազախստանում լավ են վերաբերվում նաեւ այն պատճառով, որ նրանք Լեւոն Միրզոյանի ազգակիցներն են:

Հիմա վերադառնանք այսօրվա իրողություններին: Ղազախստանի բնակչության 60 տոկոսը ղազախներ են: Ղազախներն այսօր հաշվվում են ավելի քան տասը միլիոն: Տարբեր առիթներով ղազախական պետական վերնախավի ներկայացուցիչները նշում են, որ իրենց երկիրն աշխատուժի մեծ կարիք ունի, եւ նրանք շարունակելու են խրախուսել ներգաղթը: Հատկապես կարակալ աշխատուժի, բարձրակարգ մասնագետների կարիք: Այնպես որ, ինչպես եւ Ռուսաստանը, Ղազախստանը եւս իր աճող կենսամակարդակով, տարեցտարի բարելավվող հասարակական ենթակառուցվածքներով, կրթության եւ գիտության որակով, ինչպես նաեւ հասարակական համաձայնությամբ եւ կրոնական հանդուրժողականությամբ շարունակելու է գրավել այնտեղ հաստատվել ցանկացողների հետաքրքրությունը: Բոլոր հիմքերը կան պնդելու, որ հայերը շարունակելու են հաստատվել Ղազախստանում եւ ղազախահայ համայնքը շարունակելու է մեծանալ: Սա էլ իր հերթին նշանակելու է, որ Ղազախստանը տեսանելի հեռանկարում լինելու է այն երկրների շարքում, որոնց հետ Հայաստանի բազմաբնույթ համագործակցությունը ընդլայնվելու եւ խորանալու միտում է ունենալու:

Ղազախստանի հետ քարեկամության օգուտները

Ժամանակակից միջազգային հարաբերությունները կառուցված են ազգային-պետական շահերի համադրման վրա: Այդ շահերը համընկնելու դեպքում պետությունները համագործակցում են, իսկ գերակա շահերի ընդհանրության դեպքում ձեւավորվում են դաշինքներ եւ միություններ: Ղազախստանն իր տնտեսական զարգացման հեռանկարը եւ անվտանգության երաշխիքները տեսնում է հետխորհրդային եվրասիական տարածքում եւ այդ պատճառով էլ շատ աշխույժ դերակատարություն ունի ԱՊՀ եւ ՀԱՊԿ շրջանակներում: Հենց այստեղ էլ մեր գերակա շահերը ամբողջովին համընկնում են: Վերջերս Հայաստանում անցած ՀԱՊԿ զորավարժությունները Հարավային Կովկասի նկատմամբ զանազան մութ ծրագրեր մոգոնողների համար զգաստության եւ լրջության կոչող ամենաազդեցիկ քայլն էին: Սրա մասին շատ է խոսվել, եւ չեմ կարծում, թե էլի մանրամասնելու կարիք կա: Մեր հասարակության մեջ քիչ չեն վերլուծաբանները, որոնց անհանգստացնում է Ղազախստանի ակտիվ մասնակցությունը Թյուրքական խորհրդին եւ Իսլամական համագործակցության կազմակերպությանը եւ սրա մասին անհրաժեշտ է խոսել ավելի մանրամասն: Խորհրդային Միության փլուզումից անմիջապես հետո Թուրքիան փորձեց ստանձնել թյուրքալեզու պետություններին իր շուրջը համախմբելու եւ իր գլխավորությամբ մի նոր բեւեռ ձեւավորելու դերը: Հետաքրքիր է, որ աշխարհում քիչ չէին նրանք, ովքեր խրախուսում էին Թուրքիայի այդ դերակատարությունը եւ միեւնույն ժամանակ հոռետեսորեն էին խոսում սլավոնների համախմբվելու հեռանկարի մասին՝ անվանելով դա Ռուսաստանի կայսերականությանը վերադառնալու ձգտում: Այնպես, կարծես Թուրքիան երբեւէ կայսրություն չէր եղել: Այս նոր Թյուրքական խորհրդի մեջ Ադրբեջանը անմիջապես ստանձնեց թուրք եղբորը ամեն ինչում աջակցողի դերը եւ անմիջապես էլ սկսեց դա ծառայեցնել Հայաստանը եւ հայերին վարկաբեկելու եւ սեւացնելու իր քաղաքական ծրագրին՝ նպատակ ունենալով Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը լուծել ոչ թե խաղաղ ճանապարհով, փոխընդունելի համաձայնությամբ, այլ ամեն գնով ԼՂ-ն հետ ստանալ: Անցած քսան տարիների ընթացքում աշխարհում շատ բան է փոխվել: Աշխարհն այլեւս միաբեւեռ չէ: Աշխարհը բազմաբեւեռ է: Թուրքիայի հնարավորություններն էլ՝ կլանել թյուրքական աշխարհը, գերադասելի դարձած էին: Բայց ժամանակակից աշխարհում բոլորը ներդաշնակություն եւ բարեկամներ են փնտրում: Թյուրքական պետություններն էլ ցանկանում են սերտացնել միմյանց միջեւ հարաբերությունները՝ հիմնվելով լեզվական, կրոնական եւ մշակութային ընդհանրությունների վրա: Սա բնական է եւ սա պետք է հասկանալ: Բայց թյուրքական լեզուների ընտանիքի բոլոր ներկայացուցիչներին թուրք անվանելը մեծ մոլորություն է: Այս մասին արեւելագետները գիտեն շատ վաղուց: Դեռ 11-րդ դարի հայտնի հեղինակ Մահմուդ Կաշգարիի «Դիվանում» խոսվում էր թյուրքական ժողովուրդների էթնիկական, լեզվական բազմազանության եւ ուրույնության մասին: Վերջին քսան տարիների ընթացքում պետություն ունեցող թյուրքական ժողովուրդները մեծ քայլեր են արել իրենց անկախությունը ամրապնդելու ուղղությամբ: Մասնավորապես, օգտագործելով հսկա բնական հարստությունները, Ղազախստանը զարգացնում է իր ուրույն ազգային մշակույթը, լուրջ քայլեր անում ժամանակակից աշխարհի մասշտաբով կրթված եւ մրցունակ սերունդներ ունենալու ուղղությամբ: Հենց այս ոլորտներում Ղազախստանի ազդեցիկ հաջողություններն են հիմք տալիս եզրակացնելու, որ ղազախական ազգը բուռն ու հետեւողական զարգացման ճանապարհ է բռնել՝ միաժամանակ փնտրելով իր պատմական ակունքները եւ պատմության մեջ առաջին անգամ ինքը գրելով իր ազգի պատմությունը: Իմիջիայլոց, Ղազախստանում բացառիկ հետաքրքրություն կա մեր Մատենադարանում պահվող հայատառ ղրչաղերեն ձեռագրերի նկատմամբ, որովհետեւ նրանք ղրչաղներին համարում են իրենց նախնիները եւ, ինչպես ասացինք, վերեւում իրենց պատմության ակունքները փնտրում առնվազն 1000-1500 տարիներ առաջվա պատմական անցուդարձում: Եվս մի քանի խոսք համաթյուրքականության մասին: Ագրեսիվ համաթյուրքականությունը սպառնալիք է եղել մարդկությանը եւ դրա ամենավառ ապացույցը այդ գաղափարների հիման վրա Երիտթուրքերի կառավարության կողմից հայերի ցեղասպանությունն է Օսմանյան կայսրությունում: Երիտթուրքերն այն ժամանակ իրենց բնազդներով հայերին իբրեւ թշնամի գնահատեցին սեփական ծավալման ճանապարհին, եւ դա ավարտվեց հայ ժողովրդի արեւմտյան հատվածի բնաջնջմամբ: Անընդհատ հիշեցնելով այդ հայտնի ճշմարտությունները մեր օրերում՝ մենք պետք է հասկանանք, որ այսօրվա Հայաստանի Հանրապետությունը նույնիսկ ամենավառ ֆանտազիաներում չի կարող պատվար կամ արգելք լինել թյուրքական աշխարհի համախմբման դեմ: Սա այնքան ակնհայտ է, որ դեռ երեք տարի առաջ թուրքական գլխավոր շտաբը Հայաստանը հանեց արտաքին սպառնալիքների ցանկից: Այսօր Ռուսաստանում էլ սկսել են նորովի վերաիմաստավորել Լեւ Նիկոլայի Գումիլյովի հայտնի տեսությունը եվրասիական տարածքում ռուսականության եւ թյուրքականության մի յուրօրինակ համադրության եւ ներդաշնակության մասին: Վերջին քսան տարիների ընթացքում պետություն ունեցող թյուրքական ժողովուրդները մեծ քայլեր են արել իրենց անկախությունը ամրապնդելու ուղղությամբ: Մասնավորապես, օգտագործելով հսկա բնական հարստությունները, Ղազախստանը զարգացնում է իր ուրույն ազգային մշակույթը, լուրջ քայլեր անում ժամանակակից աշխարհի մասշտաբով կրթված եւ մրցունակ սերունդներ ունենալու ուղղությամբ: Հենց այս ոլորտներում Ղազախստանի ազդեցիկ հաջողություններն են հիմք տալիս եզրակացնելու, որ ղազախական ազգը բուռն ու հետեւողական զարգացման ճանապարհ է բռնել՝ միաժամանակ փնտրելով իր պատմական ակունքները եւ պատմության մեջ առաջին անգամ ինքը գրելով իր ազգի պատմությունը: Իմիջիայլոց, Ղազախստանում բացառիկ հետաքրքրություն կա մեր Մատենադարանում պահվող հայատառ ղրչաղերեն ձեռագրերի նկատմամբ, որովհետեւ նրանք ղրչաղներին համարում են իրենց նախնիները եւ, ինչպես ասացինք, վերեւում իրենց պատմության ակունքները փնտրում առնվազն 1000-1500 տարիներ առաջվա պատմական անցուդարձում: Եվս մի քանի խոսք համաթյուրքականության մասին: Ագրեսիվ համաթյուրքականությունը սպառնալիք է եղել մարդկությանը եւ դրա ամենավառ ապացույցը այդ գաղափարների հիման վրա Երիտթուրքերի կառավարության կողմից հայերի ցեղասպանությունն է Օսմանյան կայսրությունում: Երիտթուրքերն այն ժամանակ իրենց բնազդներով հայերին իբրեւ թշնամի գնահատեցին սեփական ծավալման ճանապարհին, եւ դա ավարտվեց հայ ժողովրդի արեւմտյան հատվածի բնաջնջմամբ: Անընդհատ հիշեցնելով այդ հայտնի ճշմարտությունները մեր օրերում՝ մենք պետք է հասկանանք, որ այսօրվա Հայաստանի Հանրապետությունը նույնիսկ ամենավառ ֆանտազիաներում չի կարող պատվար կամ արգելք լինել թյուրքական աշխարհի համախմբման դեմ: Սա այնքան ակնհայտ է, որ դեռ երեք տարի առաջ թուրքական գլխավոր շտաբը Հայաստանը հանեց արտաքին սպառնալիքների ցանկից: Այսօր Ռուսաստանում էլ սկսել են նորովի վերաիմաստավորել Լեւ Նիկոլայի Գումիլյովի հայտնի տեսությունը եվրասիական տարածքում ռուսականության եւ թյուրքականության մի յուրօրինակ համադրության եւ ներդաշնակության կարեւոր ամրապնդելը: Իմիջիայլոց, Ղազախստանի կեցվածքը իսլամական համերաշխության կազմակերպությունում մեզ համար նույնպես հարգանքի եւ ըմբռնման արժանի է: ՄԱԿ-ում Լեռնային Ղարաբաղին առնչվող ադրբեջանական բանաձեւի քննարկման եւ ընդունման դեպքում Ղազախստանն իրեն պահել է ոչ թե Ադրբեջանի պես, այլ ՄԱԿ-ում ամենաազդեցիկ ուժային կենտրոն պետությունների: Առանձնակի հարգանքի է արժանի Երեւանում Ղազախստանի դեսպանության դերը, որն անընդհատ նորանոր կամուրջներ է ստեղծում իր երկրի եւ Հայաստանի գիտնականների, վերլուծաբանների, ընդհանրապես մշակութային վերնախավերի ներկայացուցիչների համագործակցության համար:

Ամրապնդել քարեկամությունը, ոչ թե վնասել

Մեր քաղաքական համակարգը, հասարակական ընկալումները, կարծիքների եւ տեսակետների խայտաբղեսությունը տարբերվում են ղազախական իրողություններից: Մեր երկրի ներսում մենք մտածում եւ խոսում ենք այնպես, ինչպես որ ենք եւ ինչի իրավունքը ձեռք ենք բերել քսանամյա անկախության ընթացքում: Բայց ուրիշների մասին դատողություններ անելիս հենվել մեր ներքաղաքական իրողությունների վրա եւ, ավելին, ուրիշներին չափել միայն մեր արշինով՝ բավական պարզունակ բան է: Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման վերաբերյալ ԵԱՀԿ Ասանայի գագաթաժողովում ընդունված հնգակողմ հռչակագիրը կարգավորման գործընթացում ամենաընդունելի եւ դրական փաստաթղթերից մեկն է եղել: Ղազախստանի եւ Հայաստանի նախագահները միշտ էլ ունեցել են փոխադարձ հարգանքի, վստահության եւ բարյացակամության վրա կառուցված հարաբերություններ: Սրանք արժեքներ են, որոնք ամենուրեք եւ հատկապես Արեւելքում միշտ էլ բարձր են գնահատվում: Մեր հարաբերությունները Ղազախստանի հետ կառուցում ենք բոլորս, ամեն մեկս մեր տեղում: Վատ չէր լինի, որ բարեկամության այս շենքը կառուցելիս ամեն մեկը, անկախ պաշտոնից ու դիրքից, համակված լիներ այս մոտեցմամբ:

ԱՐԱՄ ՍԱՖԱՐՅԱՆ
Քաղաքական վերլուծաբան, բանասիրական գիտությունների թեկնածու

Սիրիայում զինադադար չի հաստատվում

Ոչ էլ կհաստատվի, քանի դեռ Արեւմուտքը հետամուտ է երկիրը հյուծելու քաղաքականությանը

«Ազգի» հոկտեմբերի 24-ի համարում, անդրադառնալով Լիբանանի հակահեղափոխության պետ Ուիսամ ալ Հասսանի սպանությանը Բեյրութի քրիստոնեական թաղամասում, նշել էինք, որ սպանությունը ձեռնտու է նրանց, ովքեր սպանության համար մեղադրում են Սիրիայի նախագահ Բաշար Ասադի վարչակարգին:

Ինչ առումով: Այն, որ շիա-սունների բեւեռացումը սրելու միջոցով միջդավանանքային պատերազմի մեջ ներքաշվի Լիբանանը, որպեսզի հնարավոր լինի չեզոքացնել «Հզբոլլահը» ու «Ամալ» շարժումը, որոնք ի տարբերություն սպանված գեներալի շիա են, ինչպես նաեւ այդ պատերազմը «հակամարտությունը տվյալ քաղաքականության ներսում» հրահրելու այսպես կոչված տեսության համապատասխան՝ ծավալվի տարածաշրջանում:

Ի դեպ, հակաիրանյան երկրորդ պատերազմի ավարտին Վաշինգտոնն ընդդեմ Իրանի, Սաուդյան Արաբիայի գլխավորությամբ, սունիական առանցք էր ստեղծում տարածաշրջանում՝ ներառելով դրա մեջ Եգիպտոսին ու Թուրքիային: Շիա-սունների հակամարտությունն արդեն սկզբնավորված էր Իրաքում ու Բահրեյնում, «Արաբական գարնան» ազդեցությամբ սրվեց նաեւ Սիրիայում: Այս հակամարտությունը Լիբանանում եւս սրելու դեպքում կընդգծվի դրա տարածաշրջանային բնույթը, ինչը Վաշինգտոնի առջեւ կբացի հակամարտության մեջ այլ երկրներին ներքաշելու եւ նրանց Իրանի գլխավորած շիաների առանցքին հակադրելու լայն հեռանկար:

«Հակամարտություն քաղաքակրթության ներսում» տեսության կիրառումը, ինչ խոսք, գեներալ Հասսանի սպանության հեռակա նպատակն էր: Ինչ վերաբերում է անմիջական նպատակին, դա էլ, ըստ ամենայնի, Սիրիայում հակամարտող կողմերի միջեւ հրադադարի թեկուզ Իդ ալ Ադհայի տոներին հաստատման կանխարգելումն է:

Լիբանանի հակահեղափոխության պետն սպանվեց հոկտեմբերի 19-ին: Իսկ Սիրիայում կրակի դադարեցման նախաձեռնությամբ հանդես եկավ ՄԱԿ-ի ու Արաբական լիգայի ներկայացուցիչ Լախդար Բրահիմին: Սպանության պահին վերջինն արդեն զինադադարի հարցը քննարկել էր Դամասկոսում նախագահ Ասադի վարչակարգի ու ընդդիմադիր տարբեր խմբավորումների հետ, ապա եւ Թեհրանում:

Մինչ Դամասկոսը զինադադարի պատրաստակամություն էր հայտնում, իսկ Թեհրանը ողջունում էր այդ նախաձեռնությունը, հանկարծ Լիբանանում սպանվում է Սիրիայում թիվ 1 թշնամու համարում ունեցող հակահեղափոխության պետը: Սպանությունից հետո սիրիական ընդդիմությունը սկսում է զինադադարի հարցում հետ մղել, մինչդեռ համակերպվել էր կրակի դադարեցման մտքի հետ:

Ամենայն հավանականությամբ, սիրիական այսպես կոչված ընդդիմությանն ու «Ազատ Սիրիայի բանակի» մարդասպաններին հովանավորող միջազգային ուժերին խիստ մտահոգել էր Իդ ալ Ադհայի չորրորդ տոներին Սիրիայում հաստատվող զինադադարը տոներից հետո երկարաձգելու հավանականությունը: Մանավանդ, որ Սիրիայում կրակի դադարեցման Բրահիմիի նախաձեռնությունը, բացի Թեհրանից, աջակցություն էր գտել նաեւ Մոսկվայում ու Պեկինում: Այսինքն՝ հաստատման դեպքում նախաձեռնությանը Իրանի հետ մասնակից էին դառնում նաեւ Ռուսաստանն ու Չինաստանը: Դա ակնհայտ էր դարձնում Սիրիայի հարցում Արեւմուտքին հակադրվող Մոսկվայի, Պեկինի եւ Թեհրանի շահագրգռությունը:

Թերեւս այդ շահագրգռության արտահայտությունը պիտի համարվի սիրիական ընդդիմության հետ իրանական կողմի հոկտեմբերի 21-ի գաղտնի հանդիպումն ու Ռուսաստանի փոխարտգործնախարար Միխայիլ Բոգդանովի հաջորդ օրվա այցը Իրան:

Միջազգային լրատվամիջոցները երեկ միահամուռ հաղորդեցին զինադադարին նախագահ Ասադի վարչակարգի ոչ դրական մոտեցման, իսկ թուրքականը՝ սահմանի սիրիական հատվածում ապստամբների հետ կառավարական զորքերի թեժ բախումների մասին: Սա նշանակում է, որ Արեւմուտքին հարող ուժերը Լիբանանի հակահեղափոխության պետի սպանությունից հետո փորձում են հիմա էլ նախագահ Ասադի վրա բարդել կրակի դադարեցման Բրահիմիի նախաձեռնության ձախողումը:

Մինչդեռ եւ սիրիական ընդդիմության, եւ «Ազատ Սիրիայի բանակի» մասնատվածությունը հայտնի էր, ապարդյուն էին անցնում սրանց միավորելու Արեւմուտքի ջանքերը, ավելին՝ Իրանի արտգործնախարար Ալի Աքբար Սալեհին, ինչպես նշում է «Դունյա բուլթենի» կայքէջը, միանշանակ հայտարարել էր. «Սիրիան զինադադարի հարցում պատրաստակամություն հայտնեց: Սակայն սիրիական ընդդիմադիր խմբավորումների մեծամասնությունը, որը ոչ մի կերպ չի կարողանում ընդհանուր հայտարարի գալ, նշեց, որ պատրաստ չի զինադադարին: Առանձին խմբավորումներն էլ դեմ դուրս եկան: Նրանց մոտեցումը ակնհայտ ցույց է տալիս, թե Սիրիայում ովքեր են կացնահարում բռնությունների դադարեցումը»:

Ինչո՞ւ կացնահարել զինադադարը: Պատասխանն ակնհայտ է: Եթե չի հաջողվում տապալել նախագահ Ասադին, ապա գոնե «ընդդիմության» միջոցով կաթվածահար անել նրա վարչակարգին, հյուծել երկիրը: Հավանաբար դա է Սիրիայում ժողովրդավարություն հաստատելու Արեւմուտքի դեղատոմսը:

ՀԱԿՈԲ ՉԱՔԲՅԱՆ

Հայտնի կենդանին մեկ անգամ է ցեխի մեջ նստում, իսկ ադրբեջանցիները՝ գրեթե ամեն օր

Արցախում անցկացված պոեզիայի փառատոնից Ադրբեջանում, իհարկե, իրենց լավ զգալ չէին կարող: Բայց այլ բան է ստորանալ, այլ՝ դա ցուցադրել բոլորին: Vesti.az-ն այս առումով ամեն ինչ արել է: Լրատվամիջոցը ներկայացրել է թղթակցի հեռախոսազրույցը Վրաստանի ԳՄ նախագահ **Մաղվալա Գոնաշվիլիի** հետ:

- Տիկին Գոնաշվիլի, դուք եղե՞լ եք Լեռնային Ղարաբաղում:

- Այո, ես այնտեղ եղել եմ: Ինձ այնտեղ հարցրել են՝ իսկ ի՞նչ կասեն դրա մասին Բաքվի իմ բարեկամները: Ես ասել եմ, որ հարգում եմ նաեւ Բաքվի իմ ընկերներին... Դա քաղաքական հանդիպում չէր, այլ՝ բանաստեղծական: Եվ եթե այն անցկացվեր Աբխազիայում կամ Հարավային Օսիայում, ես անպայման կմեկնեի եւ այնտեղ: Բանաստեղծները պետք է հանդիպեն եւ շփվեն միմյանց հետ, որպեսզի մեր ժողովուրդները նոր կյանք սկսեն:

- Դուք գիտե՞ք, որ Լեռնային Ղարաբաղ այցելելով խախտում եք Ադրբեջանի օրենքները:

- Ոչ:

- Դուք այցի մասին տեղյակ պահե՞լ եք Թբիլիսիում Ադրբեջանի դեսպանությանը:

- Ո՛չ:

- Այսինքն պոեզիան օրենքից վե՞ր է:

- Բայց մի՞թե ես օրենք եմ խախտել:

- Այո՛, դուք ապօրինի եք այցելել Ղարաբաղ...

«Պատասխանը հեռախոսազրույցի անջատման տու-տու-ն էր», դառնությամբ գրում է vesti.az-ը:

Իրեն հարգող լրագրողը Գոնաշվիլիի առաջին իսկ խոսքերից՝ որ եթե պոեզիայի փառատոն անցկացվեր Աբխազիայում կամ Հարավային Օսիայում, ապա ինքը անպայման կմեկներ այնտեղ, քանի որ բանաստեղծները պետք է հանդիպեն եւ շփվեն միմյանց հետ, որպեսզի ժողովուրդները նոր կյանք սկսեն, հետո կփոխեր զրույցի տոնը, կփորձեր հասկանալ, թե ի՞նչ կարող են անել գրչի մարդիկ, որպեսզի ժողովուրդների միջեւ անվստահությունը թուլանա եւ այլն: Ադրբեջանցի լրագրողը, մինչդեռ, բութ համառությամբ բանաստեղծուհի Գոնաշվիլիին մեղադրանքներ է հնչեցրել եւ արժանի պատասխան ստացել՝ արհամարհանք: Եվ չի էլ ամաչել, սեփական նվաստացումը ոչ միայն հրապարակավ ներկայացրել է, այլեւ շարունակել է զանգահարել թբիլիսյան հեռախոսահամարներով: Մինչեւ իր նման մեկին գտել է՝ Ազեր Սուլեյմանովին, որ Վրաստանի խորհրդարանի պատգամավոր է ընտրվել: Վերջինս էլ խոստացել է, որ հարցը «կբարձրացնի խորհրդարանի նիստում»:

Ամենաահավորը, սակայն, այն է, որ թե՛ լրագրողը, թե՛ ազգությամբ ադրբեջանցի Վրաստանի խորհրդարանի պատգամավորը ԳՄ նախագահին համարում են Վրաստանի ... պաշտոնական ներկայացուցիչ: Չափում են իրենց չափանիշներով եւ զարմանում, թե ինչպե՞ս է հնարավոր, որ Վրաստանը չի ճանաչում Լեռնային Ղարաբաղը որպես անկախ պետություն, բայց այդ երկրի ԳՄ նախագահը այցելում է Ստեփանակերտ եւ մասնակցում պոեզիայի փառատոնին: Մաղվալա Գոնաշվիլին մեկ-երկու նախադասությունից է հասկացել՝ իրեն որտեղից են զանգել եւ արժանապատվորեն դադարեցրել խոսակցությունը: Քանի որ դասականից է ասված՝ «եւ հիմարի հետ մի վիճիր»:

ՎԱՀԲԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

ԱՄՆ

Թրամպը 5 մլն կտա Օբամայի փաստաթղթերի հրապարակման դիմաց

Ամերիկացի միլիարդատեր եւ հեռուստահաղորդավար Դոնալդ Թրամպը, որը հոկտեմբերի 22-ին խոստացել էր նախագահ Բարաք Օբամայի վերաբերյալ սենսացիոն հայտարարություն անել, երեկ YouTube-ում հանդես է եկել նախագահին ուղղված գործարքի առաջարկությամբ: Թրամպի խոսքերով, իր քայլը կարող է նույնիսկ ազդել նախագահական ընտրարշավի ընթացքի վրա:

Եվ այսպես, YouTube-ում տեղադրված տեսահոլովակում Թրամպը նախագահին առաջարկում է հրապարակել ֆլեջում եւ համալսարանում նրա ուսմանը վերաբերող փաստաթղթերը, ինչպես նաեւ անձնագիր ստանալու համար ներկայացրած դիմումը: Առաջարկությունն ուժի մեջ է մինչեւ հոկտեմբերի 31-ը, ԱՄՆ արեւելյան ափի ժամանակով ժամը 17-ը: Միլիարդատերը խոստանում է 5 մլն դոլար փոխանցել որեւէ բարեգործական կազմակերպության հաշվին (ըստ Օբամայի ցանկության):

Թրամպի խոսքերով, Օբաման «ամենաանթափանց» նախագահն է Միացյալ Նահանգների պատմության մեջ եւ եթե իրենց վերաբերող տեղեկություններ հրապարակի, ապա կհանգստացնի բազմաթիվ ամերիկացիների:

Սա Թրամպի առաջին նմանօրինակ պահանջը չէ: Անցյալ տարի նրա ճնշման ներքո Օբաման համաձայնել էր հրապարակել իր ծննդյան վկայականը: Վերջինս հայտարարում է, որ նա իրոք ծնվել է ԱՄՆ տարածքում՝ Հավայան կղզիներում եւ ըստ այդմ ունի ամերիկյան քաղաքացիություն:

Ֆրանսիայում առգրավված փողերի կեսը կրում է կոկաինի հետքեր

«Թմրանյութը հանցագործության վառելիքն է» ասացվածքը Ֆրանսիայում իրական բովանդակություն է ստացել եւ արդեն գիտականորեն հաստատված է: Քրեական ոստիկանության կենտրոնական վարչության գիտատեխնիկական ոստիկանության ենթավարչությունը «Ֆիգարո» թերթի թղթակցին հայտնել է, որ «Ֆրանսիայում ոստիկանության առգրավված թղթադրամների 50 տոկոսը կրում է կոկաինի հետքեր»: Ոստիկանները այդ մտահոգիչ փաստը ավելի վաղ հայտնել էին ներքին գործերի նախարար Մանուել Վալսին:

Խոսքը ոչ միայն թմրանյութերի գործերի հետ կապված թղթադրամների, այլ առհասարակ առգրավված փողերի մասին է՝ եվրո, դոլար եւ այլ արժույթներ: Ոստիկանության եւ ժանդարմերիայի իրավասությանը ենթակա եւ փողերի առգրավման հետ կապված գործերը խիստ բազմազան են՝ հասարակ գողությունից մինչեւ ամենաբարդ խարդախությունները: Բոլոր դեպքերում եզրակացությունը նույնն է. հանցագործների ձեռքին հայտնված երկու թղթադրամից մեկը այս կամ այն ձեւով առնչվել է կոկաինին:

Նիգերիայում գողացված նավթը վաճառվում է Բալկաններում

Նիգերիայում գողացվող նավթի մոտ 90 տոկոսը անօրինական ձեւով վաճառվում է Բալկաններում եւ Սինգապուրում: Այդ մասին BBC-ին պատմել է Նիգերիայի նախագահի խորհրդական Պատրիկ Դիլի Քոուլը:

Նրա հաշվարկների համաձայն, Նիգերիայում ամեն օր գողանում են մոտ 180 հազար բարել նավթ: Քոուլը արշավ է սկսել նավթի հափշտակումներին վերջ դնելու նպատակով:

Քոուլն առաջարկում է գողության մեջ կասկածվող նավերին հետեւել արբանյակներից:

BBC-ի աղբյուրների տվյալներով, նավթի գողության գլխավոր պատճառը պետական պաշտոնյաներից շատերի կաշառակերությունն է:

Նավթահանույթի ծավալներով Նիգերիան աշխարհում առաջատար երկրներից մեկն է եւ OPEC կազմակերպության անդամ է: Օգոստոսին երկրում օրական արդյունահանվել է 2,7 մլն բարել նավթ, ինչը Նիգերիայում ռեկորդային ցուցանիշ է: Իրանն օրական արդյունահանում է 3 մլն բարել, իսկ համաշխարհային առաջատարների Սաուդյան Արաբիան եւ Ռուսաստանը՝ ավելի քան 10 մլն բարել:

Նիգերի գետաբերանում գտնված ավազակախմբերը ոչ միայն գողանում են նավթը, այլեւ պայթեցնում են Royal Dutch Shell, ExxonMobil et Chevron ընկերությունների նավթամուղները, առեւանգում աշխատակիցներին եւ փրկագին պահանջում:

«Գաֆէսճեան» ֆանդակների պարտեզը եւ կենտրոնի նոր ցուցադրությունը

«Գաֆէսճեան» արվեստի կենտրոնը հայ մշակութասեր մի շերտի համար գտնված վայր է, որտեղ արվեստի գործերի ներկայացման մակարդակը եւ ձեւը վստահաբար տարբեր է մյուսներից եւ՝ նորարարական շնչով հատկապես: Ջեւավորված միջավայրը աչքի է ընկնում բարձրաճաշակ եւ մշակված եղանակներով: Ավելորդ է ասել, որ Կասկադի դիմացի պուրակը կամ «Գաֆէսճեան» ֆանդակների պարտեզը, որ համարվում է մոնումենտալ ֆանդակների լավագույն հավաքածուներից մեկը, ամենահանգիստ ու հաճելի զբոսավայրն է մեր քաղաքի, մանավանդ ծաղկազարդարման աշխ շոյող մեղմությամբ:

Գաբրիել Գյուրջյան, «Փողոց Երեւանում», 1923

Կենտրոնի բացման առիթով գրածս մի հոդվածի մասին, որտեղ բացօթյա այս թանգարանի ֆանդակների եւ ստեղծված մթնոլորտի հանդեպ ջերմ վերաբերմունք էր արտահայտված, մեր հեղինակներից՝ պատկերամտածողության մոդեռնիզմին հարող գրողը ասաց՝ եթե քո գրածը չլիներ, մի երկու խոսք կասեի: Զասաց ու չիմացա՝ ինչ էր այդ երկու խոսքը: Ինչեւէ, կարծիքները, իհարկե, բազմազան կարող են լինել, սակայն ճշմարիտ է, որ «Գաֆէսճեան» պարտեզի խնամված գեղեցկությունը, նաեւ հոգածությունը մեր քաղաքում երկրորդը չունի:

Զոնանա Վասկոնսելոս, «Թեյի տաղավար»

Նախորդ խոսքը հասկանալի է՝ ֆանդակների արվեստին էր վերաբերում, որոնք անկախ այլ կարծիքներից, համոզված եմ, ավելի քան հետաքրքրական են դարձնում միջավայրը եւ հարստացնում այն: Անշուշտ, դրանց մի մասը՝ զուտ դիզայներական նշանակությամբ, միջավայրը փոխելու դեր ունեն, եւ նման արվեստը չի ենթարկվում որեւէ վերլուծումների, ինչպես՝ պուրակում համեմատաբար վերջերս տեղադրված մետաղյա հյուսկեն, խոշոր թեյամանը (եւ էլի կան այդպիսիք), որ հատկապես գիշերային լուսավորության մեջ շատ տպավորիչ է: Պարտեզի գլխավոր «հերոսները» Ֆերնանդո Բոտերոյի խոշորածավալ ֆանդակներն են՝ կոլումբիացի արվեստագետին բնորոշ մտածողությամբ եւ ձեւով: Շատերի կողմից չընդունված-մերժված «Կատուն» կամ «Հռոմեական զինվորը», այսօր հակառակը, դարձել են մերը, այսպես ասած յուրային: Նույնկերպ եւ Բոտերոյի այս նորեկի՝ «Ծխող կինը» ֆանդակի խիտ նյութականացված կերպարը, որ տիրապետող է թվում առաջին հայացքից, որովհետեւ կնոջ մարմնեղ ծավալների «գեղեցկությունը» եւ կեցվածքը՝ փռված դիրքը, արհամարհանք կամ հեգնանք են արտահայտում կարծես շրջապատի նկատմամբ եւ մատների մեջ «պտտվող» ծխախոտի գլանակը, որ մի առանձին ինքնավստահություն է ներշնչում նրան, որպես ուժեղ եւ կամային անձնավորության, շուրջը ստեղծում է իրեն հասկանալ փորձողների հետաքրքրական դաշտ: Կնոջ այս մարմնեղությունը բոլորովին ճնշող չէ: Որովհետեւ ազատ է նա իր մարմնի ձեւերում ու «շարժումներում», եւ իր անհոգությունը (չնայած՝ ինչ իմանաս) կյանքի հանդեպ ինչ-որ թեթեւություն է փոխանցում:

Կասկադի պարտեզի առավելությունը նաեւ անվտանգության կանոնավորապես ապահովումն է. այլապես նորօրյա մեր վանդալների ձեռքը այս ֆանդակներին էլ հասնելու միջոցն ու ձեւը կգտներ (ցավոք ուրշ, այդ ձեռքը նրանց էլ հասավ, որի մասին **«Ազգ»**-ը տեղեկացրել էր նախորդ համարում):

Ինչ վերաբերում է կենտրոնի բուն մշակութային գործունեությանը, այն բազմաբնույթ է (երաժշտական, կրթական, գեղանկարչական) եւ նորարարական շունչ ունի՝ հետամուտ որոշակի նպատակների: Մի քանի ծրագրեր, ինչպես օրինակ, «Երեւանյան կոլեկցիոներների» այս տարվա մայիսի ցուցահանդեսը առաջին իրագործումն է մեզանում: Ընթացող նոր ցուցահանդեսը՝ նվիրված մեր մայրաքաղաքի տոնակատարությանը, բացվեց կենտրոնի «Սասունցի Դավիթ» պարտեզի սրահում, հոկտեմբերի 11-ին եւ կոչվում է «Երեւան. հայացք ապագայից»: Այն կազմակերպված է «Գաֆէսճեան» արվեստի կենտրոնի միջթանգարանային համագործակցության ծրագրի շրջանակներում եւ երկրորդն է՝ Ռուսական արվեստի թանգարանի հետ իրագործված այս տարվա մարտի «Գարնանային մոտիվներ» ցուցահանդեսից հետո:

«Երեւան. հայացք ապագայից» ցուցադրությունը իրականացավ Երեւանի պատմության թանգարանի հետ համագործակցությամբ եւ ներկայացնում է թանգարանի ֆոնդերում պահվող 23 գեղանկար եւ 13 գրաֆիկական աշխատանք: Ներկայացված գեղանկարչական գործերը անցյալ դարի Երեւանի քաղաքային նկարագրի մասին որոշակի պատկերացում են ստեղծում, որոնք լինելով վրձնի հայտնի հայ վարպետների գործեր, բացի գեղարվեստական արժեքից, ունեն նաեւ պատմական նշանակություն. այս նկարները Երեւանի ոչ վաղ անցյալի վկայություններ են եւ դրանցից մի մասը, որոնցում այսօր մեր մայրաքաղաքի հայտնի փողոցներն ու վայրերն են պատկերված, չափազանց հետաքրքրական են, որովհետեւ մեզանից ոչ մեկի մտքով չի անցնի, օրինակ, Սայաթ-Նովա փողոցը պատկերացնել այնպես, ինչպես դա տեսնում ենք 1935-ականների Արարատ Ղարիբյանի գործում: Կամ՝ կենտրոնական հրապարակի ջրավազանի կառուցման պատկերումը, կամ՝ Ֆիլիարմոնիկի շենքը:

1930-ականներից մինչեւ 60-ականների Երեւանը՝ Սեդրակ Առաքելյանի, Մարտիրոս Սարյանի, Խաչատուր Եսայանի, Վահրամ Գայֆեճյանի, Գաբրիել Գյուրջյանի, Հակոբ Կոջոյանի, Գեւորգ Գյուրջյանի, Փանոս Թերլեմեզյանի, եւս մի քանի այլ վարպետների գեղանկարչական ձեռագրով, տաք ու սիրելի քաղաքի շունչն է փոխանցում՝ ավելի շատ բնապատկերային (քաղաքի աշունը կամ գարնանային բակը, հին կամուրջը, կամ ծաղկած մի ծառ), կամ քաղաքային պատկերներ՝ փողոց, տուն. բոլորը ժամանակի մթնոլորտի մեջ են՝ հանգիստ, բնական, ինչ-որ տեղ ներհուն, ժամանակակից ռիթմից ու տեխնոմոդեռնիզմից շատ հեռու:

Ցուցասրահի մի հատվածում ներկայացված լուսանկարների շարքը այսօրվա երեւանյան պատկերներ են. ըստ կազմակերպիչների՝ քաղաքի ներկա առաջընթացը խորհրդանշող, թերեւս նաեւ ցուցահանդեսի խորագիրն արդարացնող. այսօրն իբրեւ ապագայի հայացք՝ մեր քաղաքի ոչ հեռու անցյալին:

ՄԵԼԱՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ, քաղաք Երեւան, Ագաթանգեղոսի 6/1 հասցեում 12.11.2012թ.-ին, ժ. 12:00-ին տեղի կունենա «Ֆլորես» Ածուռդի Տուն ՍՊ ընկերության (այսուհետ՝ Կազմակերպիչ) կողմից կազմակերպված բաց աճուրդը:

Աճուրդի ընթացքում վաճառվելու է հետեւյալ լոտը՝ «Երեւանի Մաթեմատիկական Մեքենաների Գիտահետազոտական Ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) սեփականության իրավունքով պատկանող ուսումնական մասնաշենքը, որի մակերեսն է՝ 1108.4 քմ., աղբանոց՝7.3 քմ., պարիսպ՝ 139.04 գծմ, հողամաս՝ 0,1750.5 հա: Լոտի գտնվելու վայրի հասցեն է՝ ՀՀ, ք. Երեւան, Հ. Հակոբյան փողոց, թիվ 3/16:

Լոտի մեկնարկային գինը սահմանված է 105000000 (մեկ հարյուր հինգ միլիոն) ՀՀ դրամ:

Լոտի նկատմամբ առկա սահմանափակումները՝ տարածքը վարձակալության պայմանագրի հիման վրա տրված է վարձակալության: Լոտի վաճառքը վարձակալության պայմանագրի դադարեցման հիմք չէ:

Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է 200000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամի չափով նախավճար, որը պետք է վճարվի Կազմակերպչի դրամարկղ կամ բանկային հաշվին (Ամերիաբանկ ՓԲԸ-ում 1570005285290100 հաշվեհամարին) սույն ծանուցման հրապարակման պահից մինչեւ 08.11.2012թ. ժ. 16:00-ն, ինչի կապակցությամբ տրվում է աճուրդի վկայական:

Աճուրդն անցկացվելու է դասական եղանակով՝ մեկնարկային գնի բարձրացմամբ: Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, որն առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից:

Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման նաեւ այն դեպքում, երբ աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է պարտագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը:

Լոտն ուսումնասիրելու ցանկացություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման հաջորդ օրվանից մինչեւ 09.11.2012թ. յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 11:00-ից մինչեւ 17:00-ն, այցելել վերը նշված հասցեով եւ ծանոթանալ լոտին՝ նախապես տանելով Կազմակերպչի թույլտվությունը:

Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով:

Աճուրդի ացնկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք.Երեւան, Ագաթանգեղոսի 6/1 հասցե:

Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (010) 56-45-13 հեռախոսահամարով:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Հայտարարության սույն տեքստը հաստատված է պարզեցված ընթացակարգի հանձնաժողովի 2012 թվականի «հոկտեմբերի» «10»-ի թիվ «11» որոշմամբ

Պարզեցված ընթացակարգի ծածկագիրը՝ ԳՊՀ-ՊԲԱՊՁԲ-03/12

Պատվիրատու՝ «Գորիսի պետական համալսարան» ՊՈԱԿ-ը , որը գտնվում է ք. Գորիս, Ավանգարդ 2 հասցեում, հայտարարում է պարզեցված ընթացակարգ:

Պարզեցված ընթացակարգում հաղթող ճանաչված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել կահույքի մատակարարման գնման /մատակարարման/ պայմանագիր (այսուհետեւ՝ պայմանագիր):

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ պարզեցված ընթացակարգի հայտեր կարող են ներկայացնել բոլորը, անկախ նրանց՝ օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Պարզեցված ընթացակարգին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք դատական կարգով ճանաչվել են սնանկ, ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային եւ պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով, որոնց գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու պահին նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված է եղել տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է, որոնք ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝ մասնագիտական գործունեության համապատասխանություն՝ պայմանագրով նախատեսված գործունեությանը, մասնագիտական փորձառություն, տեխնիկական միջոցներ, ֆինանսական միջոցներ, աշխատանքային ռեսուրսներ:

Հաղթող մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով, որի հետ կնքվում է պայմանագիր:

Սույն ընթացակարգի հրավերը ստանալու համար անհրաժեշտ է դիմել պատվիրատուին, մինչեւ սույն հայտարարության հրապարակման օրվանից հաշված՝ «9» -րդ օրը ժամը «15:00»-ն: Ընդ որում փաստաթղթային ձեւով հրավեր ստանալու համար պատվիրատուին պետք է ներկայացնել գրավոր դիմում: Պատվիրատուն ապահովում է փաստաթղթային ձեւով հրավերի տրամադրում, 1000 ՀՀ դրամը վճարված լինելը հավաստող՝ բանկի կողմից տրված փաստաթղթի պատճենը ներկայացնելու դեպքում/ այդպիսի պահանջ ստանալու օրը: /Վճարումն անհրաժեշտ է իրականացնել «Արարատ բանկ» ԲԲԸ «Գորիս» մասնաճյուղ 1510014935100100 հաշվեհամարին/:

Էլեկտրոնային ձեւով հրավեր տրամադրելու պահանջի դեպքում պատվիրատուն ապահովում է հրավերի՝ էլեկտրոնային ձեւով տրամադրումը դիմումն ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում:

Սույն հրավերով նախատեսված կարգով հրավեր չստանալը չի սահմանափակում մասնակցի՝ սույն ընթացակարգին մասնակցելու իրավունքը:

Պարզեցված ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել ք.Գորիս, Ավանգարդ 2, թիվ 1 մասնաշենք, 1104 սենյակ հասցեով, փաստաթղթային ձեւով մինչեւ սույն հայտարարությունը հրապարակման օրվանից հաշված «10»-րդ օրվա ժամը «15:00»-ն եւ դրանք պետք է կազմված լինեն հայերեն:

Սույն ընթացակարգի վերաբերյալ բողոքները ներկայացվում են Գնումների աջակցման կենտրոն՝ ք. Երեւան, Կոմիտասի 54/բ հասցեով: Բողոքարկումն իրականացվում է սույն հրավերի 1-ին մասի 12-րդ բաժնով սահմանված կարգով:

Մասնակիցների որակավորման տվյալների՝ ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին համապատասխանությունը գնահատելու համար, մասնակիցները պետք է պատվիրատուին ներկայացնեն ընթացակարգի հրավերով նախատեսված փաստաթղթեր:

**Սույն գնման գործընթացը իրականացվելու է էլեկտրոնային ձեւով՝ www.armeps.am էլեկտրոնային կայքի միջոցով:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Միխայել Ադուզցին:

Հեռախոս՝ 091690929
Էլ.փոստ՝gorissu@mail.ru
Այլ անհրաժեշտ տեղեկություններ՝ www. gnumner.am
Պատվիրատու՝ «Գորիսի պետական համալսարան» ՊՈԱԿ

ՕՐԱԿԱՐԳ

2012թ. նոյեմբերի 1-ին՝ ժամը 14:30-ին, ՀՀ ֆինանսների նախարարությունում (Մելիք-Ադամյան 1) կայանալիք վիճակախաղերի, շահումով խաղերի խաղատների լիցենզավորման հանձնաժողովի նիստի

▼ «Ինստր Լոտս» ՍՊԸ (ՎԽ-019 լիցենզիա) կողմից ներկայացված վիճակախաղերի կազմակերպման եւ անցկացման կանոնակարգերի փոփոխություններին համաձայնություն տալու հարցերի քննարկում:

▼ «Հրաչ Սարգիս» ՍՊԸ (ՇԽ-235 լիցենզիա) նկատմամբ պատասխանատվության միջոց կիրառելու հարցի քննարկում:

ՀՀ ֆինանսների նախարարություն

«Ռեալը» չխախտեց տնուր ավանդույթը

8 հանդիպումներով ավարտվեց ֆուտբոլի չեմպիոնների լիգայի խմբային մրցաշարի առաջին շրջանը: 3-rդ տուրում բավականին հետաքրքրական իրադարձություններ ծավալվեցին հատկապես D խմբում: Մադրիդի «Ռեալի» ֆուտբոլիստներին այս անգամ էլ չհաջողվեց խախտել տնուր ավանդույթը: Արդեն 12 տարի «Ռեալին» չի հաջողվում Գերմանիայում հաղթել տեղի ակումբներին: Իսկ Դորտմունդի «Բորուսիայի» հետ մրցավեճում «Ռեալն» ընդհանրապես միավոր չվաստակեց, որի պատճառով մրցակցին զիջեց խմբում իր առաջատարի դիրքը: «Բորուսիան» հաղթեց 2-1 հաշվով եւ վաստակեց 7 միավոր: Իսկ «Ռեալն» առաջին պարտությունը կրեց ու 6 միավորով նահանջեց 2-rդ հորիզոնական:

Խաղից հետո թիմերի մարզիչները հետեւյալ կարծիքն են արտահայտել:

Յուրգեն Կլոպ («Բորուսիա»)-Խոսքեր չեմ գտնում զգացումներս արտահայտելու: Այսօր մենք իսկական անակնկալ մատուցեցինք: Մեր երազանքն իրականացավ: Թեեւ առաջին խաղակեսում ամեն ինչ չէ, որ ըստ ծրագրածի ընթացավ, սակայն ընդհանուր առմամբ քննադատելու առիթ չկա: Մենք շատ լավ խաղացինք: Այս հանդիպումն իմ սաներին վստահություն կներշնչի, քանի որ վերջին շրջանում նրանց հաճախ էին քննադատում: Մեկնարկից առաջ շատերը կարծում էին, որ «Այաքսը» կեզրափակի աղյուսակը, իսկ մենք կգրավենք 3-rդ տեղը: 2 թիմերն էլ ցույց տվեցին, թե ինչի են ընդունակ: Ճիշտ է, առջեւում մեզ 3 դժվարին մրցախաղեր են սպասում, որոնք էլ կորոշեն թիմի հետագա ճակատագիրը:

Ժոզե Մուրինյու («Ռեալ»)-Իհարկե, արդյունքը չի կարող գոհացնել, սակայն սա դեռ ողբերգություն չէ: Մենք պարտվեցինք, բայց 6 միավորով 2-rդ տեղում ենք: Առջեւում սեփական հարկի տակ կայանալիք 2 խաղերն են, որոնցում հաղթելու դեպքում հաջորդ փուլի ուղեգիր կնվաճենք: Այնպես որ ամեն ինչ մեզանից է կախված: Գոլ խփելուց հետո «Բորուսիան» անցավ պաշտպանության: Նման մրցակցի հետ խաղալը բարդ է: Այսօր մրցակիցներից ոչ մեկը իրեն լավագույն կողմերով չդրսեւորեց:

Խմբի մյուս խաղում «Այաքսը» սեփական հարկի տակ 3-1 հաշվով վստահ հաղթանակ տոնեց «Մանչեսթր Սիթիի» նկատմամբ: Դա «Այաքսի» առաջին հաղթանակն էր, որի շնորհիվ թիմը 3 միավորով տեղափոխվեց 3-rդ հորիզոնական: Իսկ անգլիական ակումբը 1 միավորով եզրափակում է աղյուսակը:

Թիմերի մարզիչների կարծիքն այսպիսին է:

Ֆրանկ դե Բուր («Այաքս»)-Ես բաստեղյակ եմ «Այաքսի» հնարավորություններին, որն այսօր շատ լավ խաղաց: Մեզ շատ ուժեղ մրցակից էր դիմագրավում՝ Անգլիայի չեմպիոնը: Մենք մեր ուժեղ խաղի շնորհիվ հաղթեցինք մրցակցին: Իսկ առաջինը գոլ բաց թողեցինք, քանի որ ուշադիր չէինք: Սակայն խաղից հետո կարողացանք հավասարվել եւ մինչեւ ընդմիջում հավասարեցնել հաշիվը: Այժմ պետք է շարունակենք նույն ձեւով պայքարել, որպեսզի երկարաձգենք մեր ելույթները եվրոգավաթներում:

Ռոբերտո Մանչինի («Մանչեսթր Սիթի»)-Այսօր «Այաքսը» լավ խաղաց: Մրցակիցն ավելի բովանդակալից ֆուտբոլ ցուցադրեց: Գուցե դա իմ մեղքն էր, որ վատ էի նախապատրաստել ֆուտբոլիստներին այսօրվա հանդիպմանը: Պարտության ողջ պատասխանատվությունը վերցնում եմ ինձ վրա: Այժմ մեզ շատ դժվար կլինի 1/8 եզրափակիչի ուղեգիր նվաճել: Հաջորդ փուլ մտնելը պարզապես հրաշք կլինի:

Ա խմբում վստահ ելույթները շարունակեց պորտուգալական «Պորտոն»՝ տոնելով 3-rդ անընդմեջ հաղթանակը: Սեփական հարկի տակ «Պորտոն» 3-2 հաշվով հաղթեց Կիեւի «Դինամոյին», որն առանց իր գլխավոր մարզիչ Օլեգ Բլոխինի կրկին պարտվեց: Դինամոյականները 3 միավորով 3-rդ տեղում են: 6 միավորով 2-rդ հորիզոնականը զբաղեցնող ՊՍԺ-ն հյուրընկալվելիս 2-0 հաշվով հաղթեց Զագրեբի «Դինամոյին»:

Բ խմբում 7 միավորով աղյուսակը գլխավորեց «Շալկե-04-ը», որը Լոնդոնում 2-0 հաշվով հաղթելով «Արսենալին», շրջանցեց մրցակցին: Անգլիական ակումբն ունի 6 միավոր: 3 միավորով 3-rդ տեղում հունական «Օլիմպիակոսն» է, որը մրցակցի դաշտում 2-1 հաշվով հաղթեց «Մոնպելյեին»: Վերջինս մինչեւ 73-rդ րոպեն խաղը շահում էր 1-0 հաշվով: Սակայն հետագայում թույլ տված 2 կոպիտ սխալները ճակատագրական եղան դաշտի տերերի համար, ընդ որում հաղթական գնդակը խփվեց ավելացված ժամանակում:

Խմբային մրցաշարում վերջապես անդրանիկ հաղթանակը տոնեց Սանկտ Պետերբուրգի «Զենիթը»: «Անդերլեխտի» հետ սեփական հարկի տակ անցկացված խաղում «Զենիթին» հաղթանակ պարգեւեց 11 մ հարվածով Ալեքսանդր Կերժակովի խփած միակ գոլը, որը պաշտոնական մրցումներում ֆուտբոլիստի հոբելյանական՝ 200-rդ գնդակն էր: Շ խմբում «Զենիթը» առաջին 3 միավորը վաստակեց: Իսկ առաջատար «Մալագան» 3-rդ անընդմեջ հաղթանակը տոնեց՝ կրկին դարպասը պահելով անառիկ: Այս անգամ իսպանական ակումբը սեփական դաշտում պարտության մատնեց «Միլանին»: Միակ գոլը խփեց Խոակինը: «Միլանը» 4 միավորով զբաղեցնում է 2-rդ տեղը:

A-D խմբերում հաջորդ հանդիպումները տեղի կունենան նոյեմբերի 6-ին:

Շարապովան մտավ կիսաեզրափակիչ

Ստամբուլում անցկացվող թենիսի կանանց աշխարհի ոչ պաշտոնական առաջնությունում Մարիա Շարապովան 2-rդ հաղթանակը տոնեց եւ ապահովեց կիսաեզրափակիչի ուղեգիրը: 2-rդ տուրում Շարապովան պարտության մատնեց լեհ Ագնեշկա Ռադվանսկային: Հաջողության հասնելու համար ռուսաստանցի թենիսիստուհուց 3 ժամ պահանջվեց: Առաջին խաղափուլն անհաջող դասավորվեց Շարապովայի համար, որը պարտվեց 5-7 հաշվով: Սակայն հաջորդ 2 խաղափուլերում Մարիան վստահ հանդես եկավ՝ հաղթելով միեւնույն 7-5 հաշվով:

Շարապովայի հաջորդ մրցակցուհին ավստրալացի Սամանտա Ստոսուրն է: Վերջինս փոխարինել է հիվանդության պատճառով մրցաշարից դուրս մնացած չեխ թենիսիստուհի Պետրա Կվիտովային:

«Կարմիր խմբում» իր 2-rդ անընդմեջ հաղթանակը տոնեց ամերիկացի Սերենա Ուիլյամսը, որը 6-4, 6-1 հաշվով պարտության մատնեց չինացի Լի Նային (7-6, 6-3): Բելառուս Վիկտորիա Ազարենկոն հաղթանակով սկսեց մրցումները Ստամբուլում՝ առավելության հասնելով գերմանացի Անգելիկա Կերբերի նկատմամբ (6-7, 7-6, 6-4):

«Միլանը» մտադիր չէ փոխել մարզչին

Չեմպիոնների լիգայի մրցաշարում «Մալագայի» կրած պարտությունից հետո իտալական լրատվամիջոցներում քննարկվում է «Միլանի» գլխավոր մարզիչ Մասիմիլիանո Ալեգրիի հնարավոր պաշտոնանկության հարցը: Նոր գլխավոր մարզչի հիմնական թեկնածու է համարվում Սաուդյան Արաբիայի հավաքականի գլխավոր մարզիչ Ֆրանկ Ռայկարդը: Շատերը ենթադրում են, որ «Միլանի» ղեկավարությունն արդեն բանակցել է հոլանդացի մասնագետի հետ եւ համաձայնեցրել է պայմանագրի պայմանները:

Սակայն «Մալագայի» հետ հանդիպումից հետո «Միլանի» փոխնախագահ Ադրիանո Գալիանին հերթական անգամ հայտարարել է, որ ակումբի ղեկավարությունն առայժմ մտադիր չէ պաշտոնանկ անելու թիմի գլխավոր մարզչին:

ՇԱԽՄԱՏ

Հայաստանը կներկայացնեն 9 շախմատիստներ

Հոկտեմբերի 27-ին Սանկտ Պետերբուրգում կմեկնարկի Միխայիլ Չիգորինի շախմատի հուշամրցաշարը: Այն կանցկացվի շվեյցարական մրցակարգով, 9 տուրով: Մրցաշարի մրցանակային ընդհանուր հիմնադրամը 1,6 մլն ռուբլի է: Մրցաշարին մասնակցելու նախնական հայտ են ներկայացրել 280 շախմատիստներ, որոնցից 75-ը գրոսմայստերներ են:

Հայաստանից մրցումներին մասնակցելու ցանկություն են հայտնել 9 շախմատիստներ: Նրանց թվում է մեր փորձառու գրոսմայստեր, շախմատային օլիմպիադաների եռակի չեմպիոն Վլադիմիր Հակոբյանը: Նա իր վարկանիշով (2703) մասնակիցների մեջ 4-rդն է: Ավելի բարձր վարկանիշ ունեն Ալեքսեյ Շիրովը (2718), Ալեքսանդր Արեշչենկոն (2710) եւ Զոլթան Ալմաշին (2707): Մրցաշարին հայտավորվել են նաեւ Ռոբերտ Հովհաննիսյանը, Զավեն Անդրեասյանը, Ավետիք Գրիգորյանը, Վարդգես Թովմասյանը, Վահե Բաղդասարյանը, Արմեն Անտինյանը, Վլադիմիր Պոդոսյանը եւ Գոռ Ալեքսանյանը:

Մրցաշարի հաղթողը կպարգեւատրվի 250 հազար ռուբլով: 2-rդ տեղը զբաղեցրած շախմատիստը կստանա 180 հազար, 3-rդը՝ 140 հազար ռուբլի: Ընդհանուր առմամբ դրամական պարգեւների կարժանանան լավագույն արդյունքի հասած 28 շախմատիստները:

Մինչեւ Չիգորինի հուշամրցաշարի մեկնարկը, Սանկտ Պետերբուրգում կանցկացվի արագ շախմատի մրցաշար 9 տուրով: Հաղթողը կպարգեւատրվի 75 հազար ռուբլով: 2-rդ եւ 3-rդ տեղերը զբաղեցրածները կստանան համապատասխանաբար 60 եւ 45 հազար ռուբլի: Ընդհանուր առմամբ մրցանակային հիմնադրամը կբաշխվի 18 լավագույնների միջեւ:

Արոնյանը նախապատրաստվում է Ջերմուկում

Հայ շախմատիստների առաջատար Լեւոն Արոնյանը սկսել է ուսումնամարզական հավաքը Ջերմուկում՝ նախապատրաստվելով առաջիկա խոշոր մրցաշարերին: Նրա հետ մեկտեղ հավաքին մասնակցում են Գաբրիել Սարգսյանը, Արման Փաշիկյանը, Աշոտ Նադանյանը, Սերգեյ Մովսիսյանը ու ֆիզպատրաստության մարզիչ Արմեն Աղուզումցյանը:

Հիշեցնենք, որ Ծաղկաձորում էլ աշխարհի առաջնության նախապատրաստությունն են սկսել Էլինա Դանիելյանն ու Լիլիթ Մկրտչյանը:

Վանաձորը կհյուրընկալի ձյուդոյիստներին

Հոկտեմբերի 27-ին Վանաձորի «Հայաստան» մարզական միության մարզադահլիճում կտրվի ձյուդոյի մեծահասակների Հայաստանի առաջնության մեկնարկը: 2 օր տեւող մրցումներում ձյուդոյիստները քաշային 7 կարգում, իսկ կանայք 5 կարգում կորոշեն հանրապետության չեմպիոններին, որի արդյունքներով էլ կկազմավորվեն հավաքականները:

Մրցումների առաջին օրը ուժեղագույնները կորոշվեն տղամարդկանց մինչեւ 60, 73 եւ 90 կգ քաշային կարգերում: Կանայք առաջնության պարգեւները կվիճարկեն մինչեւ 48, 57, 63 եւ 63 կգ-ից բարձր քաշային կարգերում:

Հոկտեմբերի 28-ին հայտնի կդառնան բոլոր մրցանակակիրները: Ի դեպ, այդ օրը ձյուդոյի հիմնադիր Ջիգարո Կանոյի ծննդյան տարեդարձն է, որի առիթով մարզաձեւի միջազգային ֆեդերացիան հոկտեմբերի 28-ը հռչակել է ձյուդոյի միջազգային օր:

Մրցակիցները հայտնի են

Վիեննայում կայացած վիճակահանությամբ հայտնի են դարձել Հայաստանի մինչեւ 19 տարեկան հանդբոլիստուհիների հավաքականի մրցակցուհիները Եվրոպայի առաջնության ընտրական մրցաշարում: Մեր ընտրանին կմրցի Բուլղարիայի, Հոլանդիայի եւ Ավստրիայի հավաքականների հետ: Մրցաշարը կանցկացվի 2013-ի մայիսի 17-19-ը Հոլանդիայում: Հաջորդ փուլի ուղեգիր կստանան խմբում 2 լավագույն հավաքականները:

«Արցախը» կմասնակցի եզրափակիչ փուլին

«Արցախ» մարզական ակումբի սամբիստների թիմը մեկնել է Մոսկվա, որտեղ այսօր կմեկնարկի «Պատանի սամբիստ-2012» միջազգային մրցաշարի եզրափակիչ փուլը: Թիմային այդ մրցումներում Հայաստանը կներկայացնի «Արցախը», որը սեպտեմբերին հաղթող էր ճանաչվել Երեւանի, Գյումրիի, Վանաձորի, Արարատի մարզի եւ Արցախի ութ ակումբային թիմերի մասնակցությամբ անցկացված հանրապետական մրցումներում:

Շեյխը կարունակի ֆինանսավորել «Մալագային»

«Միլանի» նկատմամբ հաղթանակ տոնելուց հետո «Մալագայի» նախագահ, քաթարցի շեյխ Աբդուլա Բին Նասեր Ալ Տանին հայտարարել է, որ կշարունակի ֆինանսավորել թիմին. «Թիմն աղացուցեց, որ աղագա ունի: Շնորհակալ եմ ֆուտբոլիստներին, մարզչական շտաբին եւ ֆուտբոլասերներին: Մենք կշարունակենք թիմի ֆինանսավորումը»:

Նշենք, որ մրցաշրջանի շեմին տեղեկատվություն էր տարածվել, թե շեյխը հրաժարվել է ֆինանսավորել «Մալագան», որի պատճառով ակումբը ստիպված էր վաճառել իր մի քանի առաջատար ֆուտբոլիստներին:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատակազմի արարողակարգի, դատախազների սպասարկման եւ կազմակերպամեթոդական վարչության առաջին կարգի եւ երկրորդ կարգի մասնագետների թափուր պաշտոնների զբաղեցման համար անցկացվող բաց մրցույթների

/Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատակազմ/

ՀՀ դատախազության աշխատակազմում պետական ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով սահմանված հիմնական գործառույթների համառոտ նկարագիրը.

Գործավարության ապահովումը, վարչության փաստաթղթային սպասարկման, փաստաթղթաշրջանառության վարման, փաստաթղթերի պահպանության եւ արխիվացման, համակարգչային մուտքագրման եւ ելքագրման աշխատանքներ իրականացնելը, անհրաժեշտ նյութեր եւ տեղեկություն նախապատրաստելը, ինչպես նաեւ օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված իր լիազորություններից բխող այլ գործառույթներ իրականացնելը եւ այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ (սահմանափակումներ) կրելը:

ՀՀ դատախազության աշխատակազմում պետական ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով սահմանված պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների եւ աշխատանքային ունակությունների տիրապետման վերաբերյալ ներկայացվող պահանջները.

1) միջնակարգ կրթություն, 2) «Դատախազության մասին» ՀՀ օրենքի, ՀՀ գլխավոր դատախազի 2008թ. հունիսի 20-ի «ՀՀ դատախազության կանոնակարգը սահմանելու մասին» N 59 հրամանի, «ՀՀ դատախազության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի կանոնադրության եւ իր լիազորություններին առնչվող իրավական այլ ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաեւ տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն, 3) անհրաժեշտ տեղեկության տիրապետում, 4) անհրաժեշտ (պարտադիր կառավարչական հմտությունների եւ ունակությունների, ինչպես նաեւ պաշտոնի անձնագրով նախատեսված գործառույթներից բխող կառավարչական հմտությունների եւ ունակությունների տիրապետում, 5) համակարգչով եւ ժամանակակից տեխնիկական այլ միջոցներով աշխատելու ունակություն:

Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետն է «09» նոյեմբերի 2012թ.:

Մրցույթն անցկացվելու է 2012թ. նոյեմբերի 26-ին ժամը «11:00»-ին ՀՀ գլխավոր դատախազության շենքում /ք.Երեւան, Վ.Սարգսյան 5/ :

Մրցույթի նախապատրաստական աշխատանքներն իրականացվում են ՀՀ գլխավոր դատախազության շենքում /ք.Երեւան, Վ.Սարգսյան 5, հեռախոս 511-627/:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատակազմի Սեւանի, Եղեգնաձորի կայազորների զինվորական դատախազությունների տարածքային բաժինների առաջատար մասնագետների թափուր պաշտոնների զբաղեցման համար անցկացվող բաց մրցույթների

/Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատակազմ/

ՀՀ դատախազության աշխատակազմում պետական ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով սահմանված հիմնական գործառույթների համառոտ նկարագիրը.

Գործավարության ապահովումը, բաժնի փաստաթղթային սպասարկման, փաստաթղթաշրջանառության վարման, փաստաթղթերի պահպանության եւ արխիվացման, համակարգչային մուտքագրման եւ ելքագրման աշխատանքներ իրականացնելը, անհրաժեշտ նյութեր եւ տեղեկություն նախապատրաստելը, ինչպես նաեւ օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված իր լիազորություններից բխող այլ գործառույթներ իրականացնելը եւ այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ (սահմանափակումներ) կրելը:

ՀՀ դատախազության աշխատակազմում պետական ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով սահմանված պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների եւ աշխատանքային ունակությունների տիրապետման վերաբերյալ ներկայացվող պահանջները.

1) միջնակարգ կրթություն, 2) «Դատախազության մասին» ՀՀ օրենքի, ՀՀ գլխավոր դատախազի 2008թ. հունիսի 20-ի «ՀՀ դատախազության կանոնակարգը սահմանելու մասին» N 59 հրամանի, «ՀՀ դատախազության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի կանոնադրության եւ իր լիազորություններին առնչվող իրավական այլ ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաեւ տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն, 3) անհրաժեշտ տեղեկության տիրապետում, 4) անհրաժեշտ (պարտադիր կառավարչական հմտությունների եւ ունակությունների, ինչպես նաեւ պաշտոնի անձնագրով նախատեսված գործառույթներից բխող կառավարչական հմտությունների եւ ունակությունների տիրապետում, 5) համակարգչով եւ ժամանակակից տեխնիկական այլ միջոցներով աշխատելու ունակություն:

Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետն է «09» նոյեմբերի 2012թ.:

Մրցույթն անցկացվելու է 2012թ. նոյեմբերի 26-ին ժամը «11:00»-ին ՀՀ գլխավոր դատախազության շենքում /ք.Երեւան, Վ.Սարգսյան 5/ :

Մրցույթի նախապատրաստական աշխատանքներն իրականացվում են ՀՀ գլխավոր դատախազության շենքում /ք.Երեւան, Վ.Սարգսյան 5, հեռախոս 511-627/:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատակազմի Հայաստանի Հանրապետության դատախազության անվտանգության ապահովման վարչության առաջատար մասնագետի թափուր պաշտոնի զբաղեցման համար անցկացվող բաց մրցույթի

/Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատակազմ/

ՀՀ դատախազության աշխատակազմում պետական ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով սահմանված հիմնական գործառույթների համառոտ նկարագիրը.

Դատախազության հեռախոսային ցանցի անվտանգության հնարավոր լսումներից, խափանումներից ապահովում, արխիվացված փաստաթղթերում պարունակվող տեղեկատվության եւ շարժի անվտանգության ապահովում, վարչության փաստաթղթային սպասարկման, փաստաթղթաշրջանառության վարման աշխատանքների իրականացում, վարչության առջեւ դրված գործառույթներից եւ խնդիրներից բխող փաստաթղթերի պահպանության եւ արխիվացման աշխատանքների իրականացում, վարչության առջեւ դրված գործառույթներից եւ խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծերի, առաջարկությունների, եզրակացություններ, այլ փաստաթղթերի, ինչպես նաեւ դրանց վերաբերյալ մեթոդական պարզաբանումների եւ ուղեցույցների նախապատրաստում, ինչպես նաեւ օրենքով, իրավական այլ ակտերով սահմանված այլ լիազորությունների իրականացում:

ՀՀ դատախազության աշխատակազմում պետական ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով սահմանված պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների եւ աշխատանքային ունակությունների տիրապետման վերաբերյալ ներկայացվող պահանջները.

1) բարձրագույն կրթություն, 2) դատախազության աշխատակազմում պետական ծառայության կամ այլ պետական ծառայության պաշտոնններում երկու տարվա սպասք կամ դատախազության աշխատակազմում պետական ծառայության առնվազն 1-ին դասի կրստեր ծառայողի դասային աստիճան կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային սպասք կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային սպասք, 3) «Դատախազության մասին» ՀՀ օրենքի, ՀՀ գլխավոր դատախազի 2008թ. հունիսի 20-ի «ՀՀ դատախազության կանոնակարգը սահմանելու մասին» N 59 հրամանի, «ՀՀ դատախազության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի կանոնադրության եւ իր լիազորություններին առնչվող իրավական այլ ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաեւ տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն, 4) անհրաժեշտ տեղեկության տիրապետում, 5) անհրաժեշտ (պարտադիր կառավարչական հմտությունների եւ ունակությունների, ինչպես նաեւ պաշտոնի անձնագրով նախատեսված գործառույթներից բխող կառավարչական հմտությունների եւ ունակությունների տիրապետում, 6) համակարգչով եւ ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն, 7) հայերենի պատշաճ իմացություն:

Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետն է «09» նոյեմբերի 2012թ. :

Մրցույթն անցկացվելու է 2012թ. նոյեմբերի 26-ին ժամը «11:00»-ին ՀՀ գլխավոր դատախազության շենքում /ք.Երեւան, Վ.Սարգսյան 5/ :

Մրցույթի նախապատրաստական աշխատանքներն իրականացվում են ՀՀ գլխավոր դատախազության շենքում /ք.Երեւան, Վ.Սարգսյան 5, հեռախոս 511-627/ :

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Պարզեցված ընթացակարգի ծածկագիրն է՝ ՀՀ ԴԴ ՊԿՀ-ՊԲԱՇՁԲ -7/12

Պատվիրատուն՝ Հայաստանի Հանրապետության Դատական դեպարտամենտ պետական կառավարչական հիմնարկը ՀՀ ԴԴՊԿՀ , որը գտնվում է ք. Երեւան, Վ. Սարգսյան 5 հասցեում, կազմակերպում է պարզեցված ընթացակարգ:

Պարզեցված ընթացակարգում հաղթող ճանաչված մասնակցին, սահմանված կարգով կառաջարկվի կնքել ՀՀ Վճռաբեկ դատարանի վարչական շենքի տանիքի հակասառեցման համակարգի աշխատանքների կատարման պայմանագիր (այսուհետև՝ պայմանագիր):

Գնման առարկա է հանդիսանալու ՀՀ Վճռաբեկ դատարանի վարչական շենքի տանիքի հակասառեցման համակարգի աշխատանքների ձեռքբերումը:

Սույն ընթացակարգի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկություններ ստանալու համար անհրաժեշտ է այցելել ՀՀ ֆինանսների նախարարության ՀՀ գնումների համակարգ WWW. gnumner.am էլեկտրոնային հասցեով, կամ դիմել Պատվիրատուին՝ «ՀՀ Դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ին՝ ք. Երեւան, Վ. Սարգսյան 5 հասցեով, Գնումների համակարգման բաժնի ավագ մասնագետ Ջ. Աբգարյանին (հեռ. 010 511-787) մինչև 02.11.2012 թվականի ժամը 11:00-ն (ոչ աշխատանքային օր լինելու դեպքում դրան հաջորդող աշխատանքային օրը):

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատակազմի ֆինանսատնտեսական վարչության գլխավոր մասնագետ-հաշվապահի թափուր պաշտոնի զբաղեցման համար անցկացվող բաց մրցույթի

/Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատակազմ/

ՀՀ դատախազության աշխատակազմում պետական ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով սահմանված հիմնական գործառույթների համառոտ նկարագիրը.

Վարում է ՀՀ պետական բյուջեով նախատեսված՝ դատախազության կողմից իրականացվող ծախսային ծրագրերի հաշվապահական հաշվառման գործընթացը, կազմում է գանձապետական գործառնություններ համար անհրաժեշտ հանձնարարագրեր, հայտեր եւ այլ փաստաթղթեր, կազմում եւ ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամին է ներկայացնում սոցիալական ապահովագրության համակարգում անհատական (անձնավորված) վճարումների հաշվետվությունը, կազմում եւ ՀՀ ԿԱ ՀՊԾ համապատասխան տարածքային մարմնին է ներկայացնում աշխատավարձից փոխանցվող պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների եւ աշխատավարձից հաշվարկվող եկամտահարկի մասին հաշվետվությունները, կատարում է ելակետային տվյալների հավաքագրում եւ ձեւակերպումներ՝ տարեկան, եռամսյակային, ամսական հաշվետվությունները կազմելու համար, ինչպես նաեւ օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված իր լիազորություններից բխող այլ գործառույթներ իրականացնելը եւ այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ (սահմանափակումներ) կրելը:

ՀՀ դատախազության աշխատակազմում պետական ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով սահմանված պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների եւ աշխատանքային ունակությունների տիրապետման վերաբերյալ ներկայացվող պահանջները.

1) տնտեսագիտություն (էկոնոմիկա), կառավարում (մենեջմենթ), ֆինանսներ, հաշվապահական հաշվառում կամ ազգային համակարգի էկոնոմիկա եւ կառավարում մասնագիտությունների գծով բարձրագույն կրթություն, 2) դատախազության աշխատակազմում պետական ծառայության կամ այլ պետական ծառայության պաշտոններում երկու տարվա սպասք կամ դատախազության աշխատակազմում պետական ծառայության առնվազն 1-ին դասի կրստեր ծառայողի դասային աստիճան կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային սպասք կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային սպասք, 3) «Հաշվապահական հաշվառման մասին», «Եկամտահարկի մասին», «Գանձապետական համակարգի մասին», «Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների մասին», «Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին», «Դատախազության մասին», «Դատական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, գլխավոր դատախազի 2008թ. հունիսի 20-ի «Հայաստանի Հանրապետության դատախազության կանոնակարգը սահմանելու մասին» N 59 հրամանի, «Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի կանոնադրության եւ իր լիազորություններին առնչվող կազմած իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաեւ տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն, 4) ծառայողական պարտականությունների կատարման համար անհրաժեշտ տեղեկության տիրապետում, 5) անհրաժեշտ (պարտադիր կառավարչական հմտությունների եւ ունակությունների, ինչպես նաեւ սույն պաշտոնի անձնագրով նախատեսված գործառույթներից բխող կառավարչական հմտությունների եւ ունակությունների տիրապետում, 6) համակարգչով եւ ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն, 7) հայերենի պատշաճ իմացություն:

Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետն է «09» նոյեմբերի 2012թ. :

Մրցույթն անցկացվելու է 2012թ. նոյեմբերի 26-ին ժամը «11:00»-ին ՀՀ գլխավոր դատախազության շենքում /ք.Երեւան, Վ.Սարգսյան 5/ :

Մրցույթի նախապատրաստական աշխատանքներն իրականացվում են ՀՀ գլխավոր դատախազության շենքում /ք.Երեւան, Վ.Սարգսյան 5, հեռախոս 511-627/ :

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատակազմի հանրային կապերի վարչության գլխավոր մասնագետի թափուր պաշտոնի զբաղեցման համար անցկացվող բաց մրցույթի

/Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատակազմ/

ՀՀ դատախազության աշխատակազմում պետական ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով սահմանված հիմնական գործառույթների համառոտ նկարագիրը.

գլխավոր դատախազության կայքէջի պարբերաբար թարմացման ապահովում, ինչպես նաեւ դրանում տեղադրվելիք նյութերի թարգմանության իրականացում, գլխավոր դատախազի մամուլի ֆարուղարի տրամադրած հաղորդագրությունների տարածման ապահովում, գլխավոր դատախազին եւ դատախազությանը վերաբերող զանգվածային լրատվամիջոցների կողմից հրապարակումների արխիվացման աշխատանքների իրականացում, լրատվության միջոցների, հայաստանյան մամուլի ամենօրյա տեսության կազմում, ինչպես նաեւ համացանցի միջոցով օտարերկրյա թերթերի եւ գործակալությունների նյութերի ուսումնասիրում, դրանց հիման վրա տեսությունների պատրաստում, օրենքով, իրավական այլ ակտերով սահմանված այլ լիազորությունների իրականացում:

ՀՀ դատախազության աշխատակազմում պետական ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով սահմանված պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների եւ աշխատանքային ունակությունների տիրապետման վերաբերյալ ներկայացվող պահանջները.

1) բարձրագույն իրավաբանական կամ այլ մասնագիտական (եթե աշխատանքի բնույթը իրավաբանական չէ կրթություն, 2) դատախազության աշխատակազմում պետական ծառայության կամ այլ պետական ծառայության պաշտոններում երկու տարվա սպասք կամ դատախազության աշխատակազմում պետական ծառայության առնվազն 1-ին դասի կրստեր ծառայողի դասային աստիճան կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային սպասք կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային սպասք, 3) «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2008թ. հունիսի 20-ի «Հայաստանի Հանրապետության դատախազության կանոնակարգը սահմանելու մասին» N 59 հրամանի, «Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի կանոնադրության, ինչպես նաեւ իր լիազորություններին առնչվող իրավական այլ ակտերի անհրաժեշտ իմացություն, 4) ծառայողական պարտականությունների կատարման համար անհրաժեշտ տեղեկության տիրապետում, 5) անհրաժեշտ (պարտադիր կառավարչական հմտությունների եւ ունակությունների, ինչպես նաեւ սույն պաշտոնի անձնագրով նախատեսված գործառույթներից բխող կառավարչական հմտությունների եւ ունակությունների տիրապետում, 6) համակարգչով եւ ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն, 7) հայերենի պատշաճ իմացություն:

Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետն է «09» նոյեմբերի 2012թ. :

Մրցույթն անցկացվելու է 2012թ. նոյեմբերի 26-ին ժամը «11:00»-ին ՀՀ գլխավոր դատախազության շենքում /ք.Երեւան, Վ.Սարգսյան 5/ :

Մրցույթի նախապատրաստական աշխատանքներն իրականացվում են ՀՀ գլխավոր դատախազության շենքում /ք.Երեւան, Վ.Սարգսյան 5, հեռախոս 511-627/ :

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատակազմի ֆինանսատնտեսական վարչության առաջատար մասնագետի թափուր պաշտոնի զբաղեցման համար անցկացվող բաց մրցույթի

/Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատակազմ/

ՀՀ դատախազության աշխատակազմում պետական ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով սահմանված հիմնական գործառույթների համառոտ նկարագիրը.

գործավարության ապահովումը, վարչության փաստաթղթային սպասարկման, փաստաթղթաշրջանառության վարման, փաստաթղթերի պահպանության եւ արխիվացման, համակարգչային մուտքագրման եւ ելքագրման աշխատանքներ իրականացնելը, անհրաժեշտ նյութեր եւ տեղեկություն նախապատրաստելը, ինչպես նաեւ օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված իր լիազորություններից բխող այլ գործառույթներ իրականացնելը եւ այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ (սահմանափակումներ) կրելը:

ՀՀ դատախազության աշխատակազմում պետական ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով սահմանված պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների եւ աշխատանքային ունակությունների տիրապետման վերաբերյալ ներկայացվող պահանջները.

1) բարձրագույն հաշվապահական կամ այլ մասնագիտական (եթե աշխատանքի բնույթը հաշվապահական չէ կրթություն, 2) դատախազության աշխատակազմում պետական ծառայության կամ այլ պետական ծառայության պաշտոններում երկու տարվա սպասք կամ դատախազության աշխատակազմում պետական ծառայության առնվազն 1-ին դասի կրստեր ծառայողի դասային աստիճան կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային սպասք կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային սպասք, 3) «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2008թ. հունիսի 20-ի «Հայաստանի Հանրապետության դատախազության կանոնակարգը սահմանելու մասին» N 59 հրամանի, «Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի կանոնադրության, ինչպես նաեւ իր լիազորություններին առնչվող իրավական այլ ակտերի անհրաժեշտ իմացություն, 4) ծառայողական պարտականությունների կատարման համար անհրաժեշտ տեղեկության տիրապետում, 5) անհրաժեշտ (պարտադիր կառավարչական հմտությունների եւ ունակությունների, ինչպես նաեւ սույն պաշտոնի անձնագրով նախատեսված գործառույթներից բխող կառավարչական հմտությունների եւ ունակությունների տիրապետում, 6) համակարգչով եւ ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն, 7) հայերենի պատշաճ իմացություն:

Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետն է «09» նոյեմբերի 2012թ. :

Մրցույթն անցկացվելու է 2012թ. նոյեմբերի 26-ին ժամը «11:00»-ին ՀՀ գլխավոր դատախազության շենքում /ք.Երեւան, Վ.Սարգսյան 5/ :

Մրցույթի նախապատրաստական աշխատանքներն իրականացվում են ՀՀ գլխավոր դատախազության շենքում /ք.Երեւան, Վ.Սարգսյան 5, հեռախոս 511-627/ :

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, սպորագրուած է տպագրութեան՝ 25.10.2012, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: